

ԱՆԱՆԻԱՅԻ ՏՈՄԱՐԻ ՄԻ ՆՈՐԱՑԱՅՏ ԲԱՂԱՌԻՉԻ ՄԱՍԻՆ¹

Ինչպէս յայտնի է, Անանիա Շիրակունու Տոմարի կարեւոր բաղկացուցիչ մաս է եղել Խառնախորանը²: Սա գուգադրական աղիւսակների մի ամբողջութիւն է, ուր առանձին սիւնակներով զուգահեռաբար ներկայացուած են եղել 14 ազգերի օրացոյցները (Հռոմայցւոց, Յունաց, Ասորոց, Եբրայցւոց, Արաբացւոց, Մակեդոնացւոց, Եգիպտացւոց, Եթովպացւոց, Աթենացւոց, Բիւթանացւոց, Կապադովկացւոց, Վրաց, Աղուանից եւ Պարսից): Աղիւսակները կազմուած են եղել հռոմէական օրացոյցի հիման վրայ. Հռոմէական իւրաքանչիւր ամսին յատկացուած է եղել երկուական (հանդիպակաց) էջ, ուր ամսի բոլոր օրերի համար տրուած են եղել ամիս-ամսաթուերը վերոնշեալ բոլոր օրացոյցներով: Բացի՝ այդ, առանձին սիւնակներով տրուած են եղել նաեւ որոշ օրացուցային եւ աստղագիտական մակաչափեր: Անանիայի խառնախորանն ունեցել է նաեւ օժանդակ աղիւսակներ, տարուայ իւրաքանչիւր օրուայ աւուր պատկերը եւ լուսնի փուլը գտնելու համար: Խառնախորանի աղիւսակային մասին կից եղել է նաեւ բացատրական շարադրանք, ուր մանրամասն բացատրուել է հռոմէական օրացոյցը հին աւանդական ձեւով՝ Կալենդայի, Նոնոսի եւ Իդոսի միջոցով ու օրերի ետընթաց հաշուարկի կարգով ներկայացնելու բացատրութեամբ:

-
- 1 Սոյն աշխատութիւնը իրեւ գեկուցում ներկայացուած է եղել 2009ի Հոկտեմբերին՝ Մաշտոցի անուան Մատենադարանի յոթեւամին նուիրուած գիտաժողովում. տե՛ս «Մատենադարան» Մաշտոցի անուան հին ձեռագրերի գիտահետազոտական ինստիտուտի եկմանադրման յիսնամեակիմ նուիրուած գիտաժողովի թեղիսմեր, Նաիրի հրտ., Երեւան, 21-24: Սյստեղ սյուն գեկուցման միւրք ներկայացում է ամբողջարար եւ որոշ էական յակըլումներով:
 - 2 ԲՐՈՒՏԵՍ.Ն., Գ. (աշխ.), Անանիա Շիրակացու «Խառնախորանը», ՄԱԹԵ-ԻՈՒՍԵՍ.Ն., Ա. (խմբ.), Ս. Եջմիածին 1998:

Անշուշտ, մեզ հասած ոչ բոլոր խառնախորաններն են, որ պարունակում են վերոնշեալ 14 ազգերի օրացոյցները: Կան համառօտ տարբերակներ՝ միայն մի քանի ազգերի օրացոյցների պարունակութեամբ³: Հարկ է նշել նաեւ, որ մեզ հասած բոլոր խառնախորանները, անկախ իրենց համառօտ կամ ընդարձակ լինելուց, վերը թուարկուած 14 օրացոյցներից զատ պարունակում են նաեւ հայկական անշարժացուած սարկաւագաղիր օրացոյցը⁴: Այս խառնախորաններից ամէնընդարձակ ու լրիւ մի տարբերակը հրատարակուած է Ա. Աբրահամեանի կողմից՝ Յովհաննէս Սարկաւագի աշխատութիւնների շարքում⁵: Անշուշտ, հրատարակուած խառնախորանը որոշակի կապ ունի Սարկաւագ վարդապետի հետ առնուազն այնքանով, որ դրանում ներմուծուած է Սարկաւագաղիր անշարժ օրացոյցը, որ վկայում է, թէ դա այդ տեսքով կարող էր ստեղծուած (խմբագրուած - բարեփոխուած) լինել միայն Սարկաւագի օրացուցային բարեփոխութիւնից յետոյ: Նոյնիսկ հիմքեր կան համարելու, որ հէնց Սարկաւագ վարդապետն է եղել Անանիայի ստեղծած խառնախորանի խմբագրողը եւ հէնց ինքն էլ դրա մէջ ներմուծել է իր ստեղծած անշարժ (Սարկաւագաղիր) կարգը Նաւասարդի 1 = Օգոստոսի 11 կայուն տարեմուտով ու չորս տարին մէկ Մեհեկան եւ Արեգ ամիսների արանքում՝ Մարտի 8ի դիմաց դրուող նահանջի օրով⁶: Միեւնոյն ժամանակ այս ընդարձակ խառնախորանում առկայ են օրացուցային մակաչափերով մի քանի սիւնակներ, որոնց բովանդակութիւնը չի բացատրուած հրատարակուած բնագրերում (ո՛չ ձեռդրային նիւթով, ո՛չ էլ հրատարակչի կողմից): Խօսքը վերաբերում է «վերադիր հոռոմոց», «եօրներեակ հոռոմոց», «շարաթագիր» եւ «կիսակի լուսնի» վերտառութեամբ սիւնակների պարու-

-
- 3 Այդպիսին է, օրինակ, Երուատիմի թիւ 1946 ձեռագրի խառնախորանը, որի տեղեկութիւնների հիման վրայ էլ վերականգնուել էր Անանիայի խառնախորանի նախականը: Այս խառնախորանը պարունակում է միայն հոռմէական, երրայսական եւ հայկական (սարկաւագաղիր) օրացոյցները: ԲԲՈՒՏԵԱՆ Գ., անդ., 8-20:
- 4 Անշուշտ, խօսքը վերաբերում է միայն հետազոտուած խառնախորաններին: Զի բացառում, որ հայերէն ձեռագրերի մէջ ի յայտ գան նաեւ տակաւին անյայտ օրինակներ՝ այլ կազմութեամբ խառնախորանով (նաեւ՝ առանց սարկաւագաղիր հայկական օրացոյցի):
- 5 ԱԲՐԱՀԱՄՄԵԱՆ, Ա., Յովհաննէս Խմաստաէրի մատենագրութիւնը, Երևանի Համալսարանի հրտ, Երևան 1956, 159-190:
- 6 ԲԲՈՒՏԵԱՆ Գ., անդ., 67:

նակութեանը: Ժամանակին ես փորձել էի զուտ տոմարական վերլուծութիւններով գտնել այս սիւնակների թուերի իմաստը եւ կիրառութեան կերպը⁷: Սակայն, որքան էլ հնարաւոր լինէր բացատրել այդ սիւնակների պարունակութիւնը, միեւնոյն է, բաց էր մնում այն հարցը, թէ ի՞նչ կերպ է իրականում եղել դրանց հեղինակային բացատրութիւնը եւ կիրառութիւնը: Ակնյայտ էր, որ խառնախորան ստեղծողը չէր կարող այդ (նաեւ այլ) սիւնակների բացատրութիւնը տուած չինել: Եթէ մեզ է հասել Անանիայի խառնախորանի մէջ հոռմէական ամիսների ներսում օրերի հերթական կարգը տալու անսովոր ձեւի մանրամասն ու լիիւ բացատրութիւնը, ընդ որում հէնց Անանիայի անուամբ, ապա բնական է ակնկալել, որ ինչ-որ տեղ պիտի գոյութիւն ունեցած լինէր նաեւ մեկնաբանութեան կարօտ միւս սիւնակների բացատրութիւնը եւս: Ուստի, Անանիայի Տոմարի նախնական հեղինակային տարբերակը վերականգնելու համար հարկ է գտնել - վերականգնել նաեւ այդ տոմարի մաս կազմող խառնախորանի խնդրոյ առարկայ սիւնակների բացատրութիւնները:

Մաշտոցեան Մատենադարանի թիւ 817 եւ 2068 ձեռագրերով մեզ է հասել տոմարական բովանդակութեամբ մի կարճ շարադրանք առանց հեղինակի մասին որեւէ նշման: Այս երկու ձեռագրերում էլ խնդրոյ առարկայ շարադրանքը կից է «Խառնախորան» կոչուող տոմարական աղյուսակներին: Իր բովանդակութեամբ էլ այս շարադրանքը բացատրութիւնն է խառնախորանի մի քանի սիւնակների. այստեղ բացատրուած է, թէ ինչ կերպ են օգտագործուում խառնախորանի «վերադիրք հոռոմոց», «եօթներեակ հոռոմոց» եւ «շաբաթագիր» վերտառութեամբ սիւնակների տուեալները:

Նախ ներկայացնենք բուն շարադրանքը ըստ Մատենադարանի 2068 եւ 817 ձեռագրերի: Թէպէտ այս ձեռագրերից ժամանակով աւելի հինը թիւ 817ն է (1414), այդուհանդերձ ժի. դարի թիւ 2068 ձեռագրի շարադրանքն առաւել ամբողջական է⁸:

7 ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Յովհաննէս Սարկաւագի Խառնախորամում առկայ օրացուցային որոշ մակաշափերի մասին, ի Հռմիածիմ, 2007, Ա, 53-60:

8 Սա նշանակում է, որ թիւ 817 ձեռագրիր չէր կարող աղբիւր եղած լինել թիւ 2068ի համար: Ուրեմն, մեր երկու ձեռագրերն ել (այն շարադրանքի առումով) պիտի ունեցած լինեն այլ նախնական օրինակ(ներ): Եւ սրանց ընդհանուր նախնականից պիտի լինի նաեւ գրիչ Յորի յիշատակարանը վերջում (տե՛ս ստորև):

Ուստի այստեղ հիմք ենք ընդունում ՄՄ 2068ի շարադրանքը՝ որոշ շտկումներ միայն արուած են թիւ 817ի հիման վրայ⁹:

«Զուգաւորութիւն .ժգ. ազգի տումարիս ցուցանէ զամ[նենայն] կարգ եղանակաց եւ տաւնից արեգականն եւ լուսնի եւ զմոլորակաց եւ զմուտ եւ զել ամսոց եւ զպատկեր աւուրց: Ամ[նենայն] կարգ աղիւսակիդ ի վերոյ ցուցանէ զպատճառս իւր եւ զաւր պատշաճին այսպէս գտանիցնես: Նախ գիտ զվերադիր եւ զեւքներեակ հոռոմոց այսպէս:

Կալ զմեծ բռւականն Հայոց .ժ. թիւ ի բաց երթ եւ զայլն երթ .ժթ. իթ. որ մնայ վերադրացդ տուր ի .ժա. էն սկսեալ. ուր դադարի վերադիր է տարոյն. պատուով .ժա.ն յոր տարի լինի, թ եւ ժ երեկի ամ է լաւ իմացիր:

ժա	իթ	գ	ժդ	ին	զ	ժէ	իթ	թ	իմ	թ	ժդ	իդ	ն	ժգ	իէ	ը	ժթ	լ
----	----	---	----	----	---	----	----	---	----	---	----	----	---	----	----	---	----	---

Դարձեալ կալ զբվական .ե. թիւ ի բաց երթ եւ զայլն երթ .ժթ. իթ. որ մնայ .է.երեակացդ տուր յառաջի այրէն սկսեալ ուր դադարի .է.երեակ է հոռոմոց: Նոյնական եւ վերադիրն է հոռոմոց, ուր .թ. պատուով գիր կայ կարմիր ու սեւ նահանջ է:

Ա	թ	գ	դ ն	զ	է	ա	թ գ	դ	ն	գ	է ա	թ	գ	դ	է ա	թ	գ
դ	ե զ	է	ա	թ	գ դ	ն	զ	է	ա թ	գ	դ է	ն	զ	դ	է ն	զ	դ է

Ի նահանջի ամի յունուար եւ փետրվար առաջի կարմիր գրովըն վարին եւ ի մարտէ մինչեւ յաւարտ տարոյն յետի սեւ գրովն: Կալ զշարաթագիր աւուրն, եւ զ.է.երեակ տարոյն եւ զ.է. երթ որ մընայ պատկեր աւուրն է. ի դիմաց .է.երեկին կիրակի է: Տես զվերադիր տարոյն յոր ամիս որ կամիս. ի դիմացն ծնունդ է լուսնի: Ի դեպ ի վայր թվէ զաւուրս ամսոյն .ժե. լրումն է լուսնի. ի նահանջի ամի ի մարտէ մինչեւ ի յաւարտ տարոյն յաւուրս լուսնին .ա. յաւել: Առաջաւորի լրումն այսպէս արա. գիտ զվերադիր տարոյն ի յունվարի չո-

9 Երեան, Մաշտոցի անուան Մատենադարան (ՄՄ), ձեռ. 2068, 359ա - 359թ, եւ ձեռ. 817, 445թ - 446ա, շարադրամքը ներկայացուած է ըստ ձեռագրերի ուղղագրութեան եւ կետադրութեան, բացուած են միայն պատիւները:

թիցն եւ ի փետրվարի երիցն ի մէջն. եւ ի վերադրին դիմացեն թվէ դէպ ի վայր¹⁰ զաւուրս ամսոյն .գ. ի նահանջի է. լրումն է. ի լրմանէն ի վայր գիտ գ.է.երեակն տարոյն. ի դիմացն առաջաւոր է: Պատկեր աւուր լրման առաջաւորին եւ աւագ լրմանն մի է: Եւ եթէ է.երեակն ի լրմանն ի դէպ հանդիպի, ի միւս է.երեակն էջ առաջաւոր է: Խսկ գ.է.երեակն որ առաջաւորին դիմաց է թող եւ զայլ է.երեակ տարոյն թվէ .գ. բուն բարեկենդան է .ժ. թվէ զատիկ է: Ի նահանջի ամի՞ ի մարտէ հետէ գ.է.երեակն տուփ մի ի վեր փոխէ:

Գիտ զվերադիր տարոյն ի մարտի չորիցն եւ ապրիլի երիցն ի մէջն. եւ վերադրին դիմացեն թուէ զաւուրս ամսոյն .ժ.է. աւագ լրումն է որ է առաջի լրւսին տարոյն. եւ ի է.երեակն էջ զատիկ է եւ եթէ է.երեակն ի լրմանն ի դէմ հանդիպի ի միւսն էջ զատիկ է: Եւ զայլն է.երեակն թող եւ զայլ է.երեակն թվէ .ք. աշխարհամատրան է: դ. երեւման խաչի է: Եւ զկնի .ե.շարաք-ի համբարձումն է: է. պենդեկոստ է: ժ. սուրբ Գրիգորի բարեկենդան է: ժդ. Վարդավառ է: Զերեւման խաչին եւ զաստուածածինն եւ զիսաչն եւ զուրբ Գեորգի բարեկենդանն եւ զվարագա խաչն, եւ զիսա գիւտն, եւ զիսնակամուտն, եւ զուրբ Յակոբ բարեկենդանն. այսպէս արա: Գիտէ գ.է.երեակ տարոյն ի թուխ գաւազանցն ի մէջն. եւ ի դիմացն զաւուրս ամսոյն եւ այն է: Զյայտնութենէ միջոցն այսպէս արա: Յայտնութենէն թվէ մինչ ի է.երեակն եւ զայն թող, եւ զայլ է.երեակն թվէ մինչեւ յառաջաւորն այնքան շարաք է: Եւ զոր յառաջն թվեցեր աւելի ալեեր է:

Զվարդավառի միջոցն այսպէս արա. զվարդեվառն թող եւ թվէ դէպ ի վայր գ.է.երեակ տարոյն մինչեւ աստուածածին թուխ սահմանոցն ի մէջն այնքան շարաք է: Զաստուածածինն եւ զիսաչին եւ զիսնակամուտին միջոցն այսպէս արա: Գիտ գ.է.երեակ տարոյն ի թուխ նշանցն դրուցն եւ թվէ զայլ է.երեակն մինչեւ ի միւս նշանցն ի մէջն այնքան շարաք է: Յորժամ վերադիրն

10 ՄՄ 817ում բացակայում է այս բառից սկսեալ մինչ «գիտ գ.է.երեակն տարոյն» հաստուածը:

·իք. լինի կամ ·իէ. մեր զատիկն քան գիրեից բաղարջակերսն ամիս մի ի դուրս լինի:

Արեգակն ·լ. աւր կայ ի ա. կենդանակերպին եւ .ժ. աւր ի մի գաւտիսն. որպէս դրոշմեալ է ի տումարիս: Խոկ լուսինն լ. աւր գ.քժ. կենդանակերպսն վճարէ. եւ .ժ. օր գ.քժ. գօտիսն. եւ .լ. օր գ.լզ. գօտիսն, զոր արեգակն ի տարին վճարէ. լուսինն ի յամիսն զի .լ. ժամ կայ ի կենդանակերպին որ լինի .ք. օր եւ կէս. ժ. ժամ ի գաւտին: Զկենդանակերպ լուսնինն այսպէս գիտ: Կալ զաւուրս լուսնին .քժ.ապատկեայ լից գրեր[ւի] կենդանակերպի արեգականն: Եւ զայլն լ.լ. յայլ կենդանակերպսն տուր. ուր դադարէ անդ է լուսին: Նոյնպէս արա եւ վասն գօտոյն եւ զայլն .ժ.ժ. ի յայլ գօտիսն տուր ուր դադարէ անդ է լուսին: Եւ գօտիք են այսոքիկ:

Աստ քաջ աւգտէ եւ ապա մուտ ի բազմավաճառ բաղաք տումարիս. եւ գտանես զոր ինչ եւ կամիս. եւ ա՛ն զարդին բազմապտուղ այգոյս եւ զանարժան Յորս յիշեա յաղաւթս: ընդ նմին եւ զս[ար]գ[իս] եպ[իս]կ[ոպն]ս»¹¹:

Վերջին աղիւսակին յաջորդող հատուածը յիշատակարանն է, որ առկայ է բնագրի մեզ հասած երկու տարբերակներում էլ բնականաբար, այն պէտք է եղած լինի այս երկուսի համար աղբիւր հանդիսացած գաղափար օրինակում:

Այս շարադրանքի առնչութեամբ հարկ է պատասխանել մի քանի հարցի. ինչի՞ է վերաբերում շարադրանքս, արդեօ՞ք դա մասն է մի այլ բանի եւ, եթէ այո՝ ապա ինչի՞ մասն է դա, ո՞վ է հեղինակը, ինչքանո՞վ է մեզ հասած բնագիրը հարազատ, հեղինակային, եւ, ի վերջոյ ինչպիսի՞ն պիտի լինէր դրա նախնական հեղինակային տարբերակը: Անշուշտ, այս հարցերին պատասխանելու համար հարկ է մեզ հասած շարադրանքը քննել իրեն կից խառնախորանի հետ միասին:

Արդ, նայենք խառնախորանին, որի մասնակի բացատրութիւնն է այս շարադրանքը (նկար 1): **Մատչելիութեան համար նոյն աղիւսակը տանք նաեւ համակարգչային շարուածքով** (տէ՛ս

11 ՄՄ 817 ձեռագրում այս յիշատակարանի վերջաւորութիւնը տարրեր է. «...Եւ զամարժան Յոր յիշեա յաղօթս. ընդ նմին գտառայտպողս սորա»: Սա եւս յուշում է, որ այս յիշատակարանը ոչ քէ սոյն ձեռագրի գրչինն է, այլ արտագրուած է գաղափար օրինակից: (Տե՛ս նաև վերը՝ ծնք. 8):

աղիւսակը¹² ստորեւ): Նշուած երկու ձեռագրերում ներկայացուած խառնախորանը մեզ հասածների մէջ ամենաընդարձակներից է: Այս խառնախորանում իւրաքանչիւր ամսին յատկացուած է երկուական էջ¹³: Այստեղ ներկայացնում ենք խառնախորանի միայն մէկ՝ Յունուարը ամսի ձախ էջը՝ առաջիկայ քննութիւնը աւելի ընկալելի դարձնելու համար:

Նկար 1.

ՍՍ 2068 ձեռագրի խառնախորանի Յունուար ամսի ձախ էջը
(ՍՍ 2068, թիրթ 360 թ)

12 Աղիւսակում ձեռագրի մէջ առկայ հայկական աստղագիտական նշանակ-ները փոխարինուած են ներկայումս միջազգայնօրէն ընդունուած՝ դրանց համարժեք նշաններով:

13 Ի դեպ, հենց այս ձեռագրերի խառնախորաններն են իրմի ծառայել Ա. Արքահամեանին՝ Յովկաննելս Սարկաւագի խառնախորանը հրատարակելիս: Ա.ԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա., Յովկաննելս Խմաստասէրի մատենագրութիւնը, Երևանի Համալսարանի հրտ., Երևան 1954, 159-190: Յաւօֆ, հրատարակողը խառնախորանը հրատարակել է առանց այս բնագրի: Որքան ինձ յայտնի է, այս բնագիրը տակաւին հրատարակուած չէ:

Նախ նկատենք, որ կայ որոշակի անհամապատասխանութիւն այս բնագրի եւ դրան կից խառնախորանի միջեւ։ Բնագրում նշւում է 16 (ԺԶ.) ազգերի օրացոյցների զուգաւորութեան մասին, մինչդեռ կից աղիւսակներում առկայ են միայն 15 ազգերի օրացոյցներ՝¹⁴։ Սա արդէն վկայութիւն է այն մասին, որ խնդրոյ առարկայ բնագիրը մեզ հասել է աղաւաղուած (թերեւս նաեւ խմբագրուած)։ Նայենք, թէ ի՞նչ ունենք այս բնագրի տեղն ու նախնական վիճակը հասկանալու համար։

Ա.- Այն, որ այստեղ տրուած է խառնախորանի երեք՝ «վերադիրք հոռոմոց», «եօթներեսակ հոռոմոց» եւ «շարաթագիր» վերտառութեամբ սիւնակների պարունակած թուերի կիրառման մանրամասն բացատրութիւնը, միանշանակ վկայում է, որ այս շարադրանքը բաղկացուցիչ մասն է խառնախորանի իրեւ դրա օժանդակ, բացատրական հատուած, քանի որ խառնախորանի մէջ այլուր չկայ այս սիւնակների բացատրութիւնը, եւ առանց բացատրութեան էլ դրանք ինքնին հասկանալի չեն։

Բ.- Միւս կողմից գիտենք, որ Անանիա Շիրակունին, իբրեւ մաս իր Տոմարի, կազմել է նաեւ խառնախորան, որն ունեցել է տարրուայ 12 ամիսների աղիւսակներից զատ նաեւ օժանդակ ազիւսակներ եւ բացատրական շարադրանք (որը եւ պահպանել է հեղինակի անունը)¹⁵։ Այս խառնախորանում զուգահեռաբար ներկայացուած են եղել 14 ազգերի օրացոյցները։ Այս խառնախորանը Անանիայից յետոյ խմբագրուել-փոփոխուել է, եւ, ամենայն հաւանականութեամբ, Սարկաւագ վարդապետն էլ նրա մէջ ներմուծել է նոր անշարժացուած Սարկաւագադիր կարգը։ Փաստորէն, Սարկաւագի անունով հրատարակուած խառնախորանը Անանիայի խառնախորանի խմբագրուած-լրացուած տարբերակն է։ Սա թոյլ է տալիս մտածել, որ մեր խնդրոյ առարկայ «Զուգաւորութիւն ժգ. ազգի տումարիս...» սկսուածքով

14 Այս տարբերութիւնը նկատուել եւ նշուել է նաև Մատենադարանի ձեռագրերի մայր ցուցակում։ Մայր ցուցակ հայերէն ձեռագրաց Մաշտոցի անուամ Մատենադարամի, Խո. Գ., կզմց. ԵԳԱՆԵԱՆ Օ., խմբ. ԱՆԹԱՐԵԱՆ, Փ. - ՔԷՕՍԵԱՆ, Ց. - ՂԱԶԱՐՈՍԵԱՆ, Ա. - ՀԱՅՐԱՊԵՏԵԱՆ, Շ. ՔԻԱ. Մագաղաթ հրտ., Երեւան 2007, սիւն. 843։ Այս տարբերութեան պատմառին եւ այդ հասուածի նախմականին կ'անդրադանեմ յօդուածիս վերջում։

15 Մաթրամասն ԲՐՈՒՏԵԱՆ, Գ., Անանիա Շիրակացու «Խառնախորանը»։

բացատրական շարադրանքը եւս նախապէս պէտք է եղած լինի Հէնց Անանիայի կազմած խառնախորանի մասը:

Գ.- Այս գրութեան մէջ վերադիրներն ու եօթներեակները գտնելու կերպը բացատրուած է Հայոց Մէծ թուականի կիրառութեամբ: «Մէծ թուական» յորջորջումն արդէն նշանակում է, որ դա պիտի շարադրուած լինի Փոքր թուականի սկզբնաւորումից յետոյ, այլապէս անիմաստ պիտի լինէր «Մէծ թուական» անուանումը: Այսինքն՝ այս ձեւակերպումները մեզ հասած վիճակով չէին կարող ստեղծուած լինել ԺԲ. դարից առաջ:

Դ.- Շարադրանքը մեզ է հասել կրճատուած, խմբագրուած, աղաւաղուած վիճակում: Այստեղ խօսւում է, որ ներկայացւում են «ամենայն կարգ եղանակաց եւ տօնից եւ զընթացից Արեգականն եւ Լուսնի եւ զմոլորակաց...» Միեւնոյն ժամանակ, այս բնագրի մեզ հասած տարբերակում ոչինչ չկայ մոլորակների ընթացքի մասին, չատ սուղ են տուեալները Արեգակի եւ Լուսնի մասին: Մինչդեռ բուն խառնախորանի աղիւսակներում այդպիսի տուեալներ առկայ են: Բնականաբար, սպասելի է, որ սոյն բնագրի նախնականը պարունակէր բացատրութիւններ մոլորակների ընթացքի մասին եւ դրանում աւելի ընդարձակ լինէին տեղեկութիւնները Արեգակի եւ Լուսնի մասին: Ուստի, սա եւս հիմք է տալիս մտածելու, որ շարադրանքը մեզ է հասել կրճատուած, փոքրացուած:

Մեր ունեցած երկու ձեռագրերի տարբերակները իրարից որոշ չափով տարբերում են. կան ուղղագրական, կէտադրական տարբերացումներ, ինչպէս նաեւ բացթողումներ: Շարադրանքում առկայ են ուղղագրական ձեւեր, որ յուշում են գաղափար օրինակի հապէս աւելի հին լինելը ԺԵ. դարից¹⁶: Այդուհանդերձ, դրանք բաւարար չեն գրութեան բուն ժամանակը եւ հեղինակը ճշտելու համար: Ուստի, հարկ է գտնել այլ միջոցներ:

Ալոր, տեսնենք, թէ ի՞նչ կողմնակի տուեալներ կարող ենք գտնել շարադրանքիս հեղինակային պատկանելութիւնը պարզելու համար:

Առաջին ակնառու հանգամանքը այն է, որ թէպէտ խառնախորանում առկայ է Սարկաւագդիր անշարժ օրացոյցը, դրան

16 Բնագրագիտական այս դիտարկումների համար պարտական եմ ձեռագրեւու Արիենիկ Ղազարոսեանին, որին եւ սիրով յայտնում եմ շնորհակալութիւնս:

հակառակ, Լուսնի փուլերն ու տարուայ օրերի աւուր պատկերները որոշելը կատարւում է հռոմէական օրացոյցի վերադիրներով ու եօթներեակներով: Եւ ընդհանրապէս, ամբողջ խառնախորանը կազմուած է հռոմէական օրացոյցի հիման վրայ. այստեղ հիմք է ընդունուած հռոմէական տարին, եւ աղիւսակներն էլ կազմուած են հռոմէական ամիսներով: Իրօք, եթէ խառնախորանը կազմուած է Հայաստանում, հայկական միջավայրում օգտագործելու համար, բնական պիտի լինէր այդտեղ կիրառել հայկական անշարժ օրացուցային (Սարկաւագադիր) կարգը: Ինչո՞ւ պիտի այս աղիւսակները Սարկաւագադիր անշարժ օրացոյցի առկայութեամբ հանդերձ կազմուէին հռոմէական օրացոյցի հիման վրայ: Հարցս բնական տրամաբանական պատասխան չունի: Սակայն սա կարող է դիւրաւ բացատրուել, եթէ ընդունենք, որ այդ խառնախորանը խմբագրուած - փոփոխուած տարբերակն է մի այլ՝ նախնական խառնախորանի, եւ այդ նախնականն էլ կազմուած է եղել հէնց հռոմէական օրացոյցի հիման վրայ, այսինքն՝ կազմուած է եղել այն ժամանակ, երբ տակաւին չի եղել Սարկաւագադիր օրացոյցը, ուրեմն՝ Յովհաննէս Սարկաւագից առաջ: Իսկ Սարկաւագից առաջ էլ, գիտենք, որ խառնախորան կազմել է Անանիա Շիրակունին, եւ Անանիայից մինչեւ Սարկաւագ մեզ այլ խառնախորան յայտնի չէ: Ուստի, բնականօրէն պիտի ընդունենք, որ խնդրոյ առարկայ խառնախորանը խմբագրեալ - փոփոխեալ տարբերակն է հէնց Անանիայի ստեղծած խառնախորանի:

Շարադրանքիս սկզբնամասում տրուած է տարուայ հռոմէական վերադիրը գտնելու կերպը: «Կալ զմեծ քուականն Հայոց ժ. թիւ ի քաց երբ եւ զայլն երբ ժ.ժ. որ մնայ վերադրացդ տուր ի ժա. էն սկսեալ. ուր դադարի վերադիր է տարոյն»: Այսինքն՝ Հայոց Մեծ թուականից հարկ է հանել 10, ապա տարբերութիւնը բաժանել 19-ի եւ վերցնել մնացորդը: Ապա այդ մնացորդով գտնել վերադիրը կից աղիւսակից՝ սկսելով 11-ից:

Մեծ թուականի առաջին տարին սկսւում է Փրկչ. 552ից: Սրանից 10 տարի առաջ կը լինի Փ. 552 - 10 = 542: Սա, իր հերթին, Անդրէաս Բիւզանդացու կիրառած 19ամեայ պարբերաշրջանի սկզբնատարիներից է: Այսպէս. Անդրէասի 200ամեակի առաջին տարին Փ. 352ն է: Եթէ դրան յաւելենք 10 հատ 19ամեակ, կը ստանանք հէնց $352 + 10 \times 19 = \Phi. 542$: Այս թուականին սկսուել էր Անդրէասի 200ամեակի վերջին 19ամեայ պարբերաշրջանը, որը 552ին կիսատ մնալով, առիթ տուեց տոմարական

շփոթութիւնների¹⁷: Այսինքն՝ այս շարադրանքում, ինչպէս նաեւ կից խառնախորանում կիրառուած է հէնց այն 19-երեակը, որ կիրառել է Անդրէասը: Աւելին, սկիզբ է ընդունուած հէնց Անդրէասի վերջին՝ կիսատ մնացած 19-երեակի սկիզբը: Միեւնոյն ժամանակ էլ գիտենք, որ Անանիան, անփոփոխ թողնելով Աթանաս Տարօնացու հիմնած օրացոյցի տարեհաշիւն ու վերադիրների համակարգը, դրա հետ մէկտեղ իր կազմած ՇԼԲ բոլորակը սկսում է Հայոց ոչ թէ 1, այլ 29 թուականից եւ այդ կերպ շարունակում է Անդրէասի կիրառած 19երեակները¹⁸:

Համեմատելով այս բնագրի վերադիրների շարքը Անանիայի եւ Սարկաւագի կիրառած համապատասխան շարքերի հետ՝ տեսնում ենք, որ այստեղ առկայ է Սարկաւագի կիրառած վերադիրների շարքը¹⁹: Սակայն ի տարբերութիւն Սարկաւագի վերադիրների, այստեղ առաջին տարուայ վերադիրը 11 է. շարքը այստեղ սկսում է 11ով (տե՛ս բնագրի աղիւսակը): Սա նշանակում է, որ այստեղ 19երեակի սկիզբ է ընդունուած 11 վերադրով տարին: Իսկ գիտենք, որ Սարկաւագի վերադիրների համակարգում 11 վերադրին համապատասխանում է Ապրիլի 4 լրումով տարին: Այսինքն, ինչպէս Անանիայի տոմարում, այնպէս էլ այստեղ 19երեակի սկիզբ է ընդունուած Ապրիլի 4 լրումով տարին: Այսինքն, բնագրիս աղիւսակի վերադիրները ցոյց են տալիս, որ այստեղ կիրառուած է Անանիայի 19երեակների համակարգը, սակայն վերադիրները Սարկաւագինն են՝ 2ով մեծ են Անանիայի վերադիրներից:

Սակայն սա հարցի մի կողմն է միայն: Բանն այն է, որ վերբերեալ բանաձեւով հաշուարկուած վերադիրները ոչ մի

17 Յետագայում հենց այդ շփոթութիւնն էլ առիթ եղաւ հայկական առաջին իմբնուրոյն քրիստոնեական գատկացուցակի սունդման համար Մովսէս Եղիվարդեցի Կաքողիկոսի օրօք Արանաս Տարօնացու ձեռքով. եւ այս գատկացուցակի տարիմերի բուահաշիւն էլ դարձաւ Հայոց բուականը (Հայոց Մեծ բուականը):

18 Հայոց 29 բուականը Անդրէասի գատկացուցակի վերջին 19երեակի սկրզբից՝ 542ից եեռու է $29 + 9 = 38$ տարի: Իսկ 38 տարին էլ եաւասար է 19ամեայ երկու պարբերաշրջամի. $2 \times 19 = 38$: Այս մասին աւելի մասմասն՝ ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Անանիա Շիրակումու ՇԼԲ Բոլորակը Հստ Հայերէմ Հմագոյն Թողեայ Զեռազրի, ի էջմիածին, 1998, Ա, 125-143:

19 ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Անանիա Շիրակացու «Խառնախորանը», 50-58:

կերպ չեն համապատասխանում ո՛չ Անանիայի, ո՛չ էլ Սարկաւագի կազմած ՇԼԲ աղիւսակների տուեալներին:

Իրօք, ըստ բանաձեւի՝ տարեթուից տասը հանելով, մենք հաշուարկման սկիզբը դնում ենք Փրկէ. 552 - 10 = 542: Սա էլ, ինչպէս ասուեց, Անդրէասի 19երեակի սկիզբն է: Ուրեմն, այդ տարուայ Լուսնի աւագ լրումը պիտի լինի Ապրիլի 4ին, եւ հռոմ. վերադիրն էլ պիտի լինի 9: Եւ հէնց այդպիսի պատկեր էլ առկայ է Անանիայի ՇԼԲում: Ինչպէս նշուեց, Անանիան իր ՇԼԲ աղիւսակը սկսել է Հայոց իթ(29) թուականով՝ այդ կերպ իր աղիւսակում կիրառուած 19երեակը համապատասխանեցնելով Անդրէասի 19երեակին (դարձնելով դրա շարունակութիւնը): Ահա այստեղ Հայոց իթ(29) թուականի հռոմ. վերադիրը թ(9) է, աւագ լրումը՝ Ապրիլի 4ին²⁰: Եւ սրան հակառակ՝ մեր բանաձեւն ու կից աղիւսակը առաջին տարուայ համար տալիս են վերադիրը 30: Այսպէս, աղիւսակի վերջին վանդակում վերադրի արժէքը 30 է, այսինքն, եթէ տարեթիւը (ըստ հրահանգի) 19ի բաժանուի առանց մնացորդի (բաժանելիս ստացուած մնացորդը լինի զրօ), հարկ է վերադրի արժէքը վերցնել աղիւսակի վերջին վանդակից²¹: Այս նոյնը տեղի ունի կամայական տարեթուի համար:

Նայենք օրինակներով: Հաշուենք, օրինակ, Հայոց ժե(15) թուի համար: Հանենք 15ից 10, կը լինի 15 - 10 = 5: Քանի որ տարբերութիւնը 19ից փոքր է, զանց ենք առնում 19ի բաժանելը եւ հէնց ստացուած տարբերութիւնով էլ նայում ենք աղիւսակի մէջ: Աղիւսակի հրդ վանդակում իթ(25) է: Ուրեմն, ըստ այս բանաձեւի եւ կից աղիւսակի, Հայոց 15 թուականի հռոմէական վերադիրը 25 է: Այս նոյն տարուայ հռոմ. վերադիրը Անանիայի ՇԼԲում Դ(4) է, իսկ Սարկաւագի ՇԼԲում՝ Զ(6)²²:

20 Անանիայի Շիրակայնոյ Համարոդի մատեմագրութիւնն, տեքստը պատրաստեց Ա.ԲՐԱՀԱՄԵՍՆ, Ա., ՀՍՍՌ Մատենադարանի հրատ., Երևան 1943, 264:

21 Եթէ բաժանման մնացորդը մէկ է, ապա վերադիրը վերցնում ենք առաջին վանդակից, եթէ երկու է, ապա՝ երկրորդ վանդակից, իսկ մնացորդ չմնալը համարժէք է մնացորդը 19 լինելուն: Այս պարագայում հարկ է վերադրի արժէքը վերցնել վերջին՝ 19րդ (ժԹ.) վանդակից:

22 Ցովիանենէս Սարկաւագի կիրառած հոռմ. վերադիրները միշտ երկուսով մեծ են Անանիայի կիրառած հոռմ. վերադիրներից: Պատճառն այն է, որ Սարկաւագ վարդապետը փոխել է հոռմ. վերադիրների համակարգը՝ դրանց արժէքները աւելացնելով երկուսով: Սա ել հետևանք է այն իրողութեամ, որ վերադիրների համակարգը սահմանուած է, ընդհանրապէս,

Նայենք նաեւ Հայոց ՆՄՁ(456) տարուայ համար: Անանիա-
յի ՇԼԲում այս տարուայ հռոմ. վերադիրը ԺԹ(19) է, իսկ Սար-
կաւագի մօտ՝ ԻԱ(21): Հաշուենք նոյնը մեր բանաձեւով եւ ա-
ղիւսակով: $456 - 10 = 446$: Եւ $446 - (23 \times 19) = 9$: Այսինքն՝
19ի բաժանելիս մնացորդը լինում է 9: Աղիւսակի 9րդ վանդա-
կում էլ ունենք հէնց Թ(9): Սա բնաւ չի համընկնում Անանիայի
եւ Սարկաւագի կազմած ՇԼԲ աղիւսակներում եղածին:

Այս օրինակները եւս մեզ համոզում են, որ մեր բնագրում
առկայ՝ հռոմ. վերադիրների որոշման բանաձեւն ու կից աղիւ-
սակը սխալ են աշխատում. դրանցով որոշուած վերադիրները
չեն համապատասխանում ո՛չ Անանիայի եւ ո՛չ էլ Սարկաւագի
կիրառած հռոմէական վերադիրների համակարգերին:

Քանի որ ՇԼԲ աղիւսակների տուեալները ճիշտ են, բնա-
կանաբար, սխալ պիտի լինի մեր բանաձեւը (կից աղիւսակի
հետ միասին): Դժուար է միանշանակ մատնանշել սխալի պատ-
ճառը, սակայն ուշագրաւ է հետեւեալը: Այս բանաձեւը ըստ էու-
թեան, համընկնում է հռոմ. վերադիրները գտնելու այն բանա-
ձեւին, որ կից է Անանիայի կազմած խառնախորանի օժանդակ
աղիւսակներին²³: Տարբերութիւնն այն է միայն, որ Անանիայի
խառնախորանում կիրառուած է ոչ թէ Հայոց թուականը, այլ
Հռոմի հիմնադրման թուականը՝ դրա երկրորդ հազարամեակի
սկզբից (Փրկչ. 248 թուականից)²⁴:

**Նայենք, թէ ի՞նչ կը տայ մեր բանաձեւի մէջ Հայոց թուա-
կանը Հռոմի թուականով փոխարինելը:** Հայոց եւ Հռոմի թուա-
կանների տարբերութիւնը 304 տարի է ($552 - 248 = 304$): Այս
304 տարին հաւասար է 16 հատ 19երեակի (304 = 16 x 19): Այ-

Լուսնի փուլերի 19ամեայ պարբերաշրջանի վրայ: Այս պարբերաշրջանը
1 օրուայ սխալ է գոյացնում մօտ 310 տարում: Եւ Նիկիայի ժողովից
յետոյ մինչև Սարկաւագի ժամանակներն անցած շուրջ 7 դարերի ըն-
թացքում այդ սխալը կուտակուելով արդէն դարձել էր 2 օրից աւելի:
Փաստորէն Սարկաւագը նաեւ շոկել է Մերոնի շրջանի (19ամեայ պար-
բերաշրջանի) առաջարքած սխալը:

23 ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Անամիա Շիրակացու «Խառնախորանը», Երեւան 1998,
83:

24 Հռոմի հիմնադրման թուականը՝ հաշուարկուած դրա երկրորդ հազարա-
մեակի սկզբից՝ Փրկչ. 248 թուականից (որ է Փիլիպոս կայսեր Ե. տա-
րուց), լայնօրէն կիրառուել է Անամիայի կողմից: Դա յայտնի է նաեւ
«Յունաց թուական» յորջորջմամբ, ինչպէս նաեւ կոչուել է «Քննիկոն»:

սինքն՝ Հայոց թուականը Հռոմի թուականով փոխարինելը Լուսնի փուլերի (իմա' 19երեակների եւ վերադիրների) առուամով մեր բանաձեւի տալիք արդիւնքի մէջ ոչինչ չի փոխի: Այժմ նայենք բանաձեւին կից ներկայացուած հոռմ. վերադիրների համակարգը:

Քանի որ մեր շարադրանքի մէջ առկայ՝ վերադիրների աղիւսակը լիովին համապատասխանում է Սարկաւագ վարդապետի կիրառած հոռմ. վերադիրների համակարգին, ապա հարկ է դրա փոխարէն դնել Անանիայի կիրառած հոռմ. վերադիրների համակարգով աղիւսակը, ընդ որում, այնպէս, որ առաջին տարիները երկու դէպօւմ էլ նոյնը լինեն: Այսինքն, քանի որ մեր ընագրի աղիւսակի առաջին տարին Ապրիլի 4 լրումով տարին է (վերադիրը՝ 11), ապա նոյն լրումով տարին պիտի լինի նաեւ ըստ Անանիայի համակարգի կազմուած աղիւսակում (այդտեղ դա 9 վերադրով տարին է): Այդ պայմաններին բաւարարող աղիւսակը պիտի լինի հետեւեալ տեսքի:

<i>p</i>	<i>b</i>	<i>w</i>	<i>ðp</i>	<i>þt</i>	<i>t</i>	<i>ðb</i>	<i>þq</i>	<i>k</i>	<i>ðð</i>	<i>l</i>	<i>ðw</i>	<i>þp</i>	<i>g</i>	<i>ðt</i>	<i>þb</i>	<i>q</i>	<i>ðk</i>	<i>þl</i>
----------	----------	----------	-----------	-----------	----------	-----------	-----------	----------	-----------	----------	-----------	-----------	----------	-----------	-----------	----------	-----------	-----------

Արդ, ընդունելով, որ մեր բանաձեւին կից պիտի կիրառուած լինի հոռմ. վերադիրների այս աղիւսակը, նայենք, թէ բանաձեւի մէջ ի՞նչ փոփոխութիւն պիտի կատարուի, որ բանաձեւն ու աղիւսակը միասին տան այն վերադիրները, որ առկայ են Անանիայի ՇԼԲ բոլորակում: Սա նշանակում է, որ հարկ է դանել, թէ ի՞նչ թիւ պէտք է հանել Հռոմի թուականից, որ տարբերութիւնը 19ի բաժանելիս ստացուած մնացորդը մէկի հաւասար լինի 9 վերադրով տարուայ համար: Այս պայմանին բաւարարում է 9ը:

Իրօք, այդ արդիւնքը կարելի է ստանալ պարզ հանրահաշուական հաւասարում լուծելով: Եթէ թուականը նշանակենք թով, իսկ անյայտ հանելին *X*-ով, ապա կարող ենք Անանիայի ՇԼԲի առաջին տարուայ համար մեր պայմանը գրել հետեւեալ կերպ.

$\Phi - x = 19 \times n + 1$: Այստեղ *n*-ը կամայական ամբողջ թիւ է:

Անանիայի ՇԼԲ բոլորակի առաջին տարուայ համար բանաձեւիս մէջ հարկ է տեղադրել $\Phi = 29$ եւ $n = 1$: Այս դէպօւմ մեր բանաձեւը կը տայ $29 - x = 19 + 1$: Այստեղից էլ կը ստա-

ցուի $29 - x = 20$: Եւ, ուրեմն, $x = 29 - 20 = 9$: Այսինքն՝ ի՞րոք, հռոմ. վերադիրները գտնելու մեր բանաձեւի մէջ հարկ է թուականից հանել 9:

Նայենք վերի օրինակները այս փոխուած բանաձեւով ու աղիւակով: Հայոց 15 թուականի համար կ'ունենանք հետեւեալը: Հայոց 15 = Հռոմի $(15 + 304) = 319$: 319ից հանենք 9, կը մնայ 310: Սա էլ բաժանենք 19ի: կը մնայ 310 - (16 - 19) = 6 մնացորդ: Աղիւակիս ճրդ վանդակում էլ ունենք 4: Եւ սա էլ համապատասխանում է Անանիայի Շլիֆի 15 թուականի հռոմ. վերադիրն: Նոյն է եւ Հայոց 456 թուականի համար: Այստեղ էլ Հայոց 456 = Հռոմի $456 + 304 = 760$: $760 - 9 = 751$: $751 - (39 - 19) = 10$ մնացորդ: Աղիւակիս 10րդ վանդակում հռոմ. վերադիրի համար ունենք 19(ԺԹ) արժէքը, եւ սա էլ համընկնում է Անանիայի Շլիֆում այս տարուայ հռոմ. վերադիրի արժէքին (տե՛ս վերը):

Նկատենք նաեւ, որ բանաձեւիս մէջ Հայոց թուականի փոխարինումը Հռոմի թուականով վերացնում է այն ակնյայտ տարութիւնը, թէ ինչո՞ւ պիտի հռոմէական օրացուցային իրողութիւնը գտնելու համար կիրառուած լինի հայկական թուականը: Այս փոխարինմամբ նաեւ ներդաշնակեցւում են բանաձեւի մէջ կիրառուած օրացուցային իրողութիւնն ու նոյն բանաձեւի արդիւնք հանդիսացող օրացուցային իրողութիւնը:

Որպէս յաջորդ քայլ նայենք հռոմէական եօթներեակների համակարգը խնդրոյ առարկայ շարադրանքի մէջ: Հռոմէական եօթներեակները գտնելու բանաձեւը (կանոնը) մեր բնագրի մէջ հետեւեալն է: «Դարձեալ կալ զբվական²⁵ և. թիւ ի բաց երթ եւ զայն երթ իր. իր. որ մնայ է. երեակացդ տուր յառաջի այրեն սկսեալ ուր դադարի է. երեակ է հոռոմնց»: իսկ կից աղիւակը, որով պիտի որոշուեն եօթներեակները, հետեւեալն է.

25 Այստեղ ուղղակիօրէն թշուած չէ, թէ ինչ քուականի մասին է խօսքը, սակայն այն կանոնը ամբողջ շարադրանքի մէջ դիտարկելիս ակնյայտ է դառնում, որ խօսքը միանշանակ վերաբերում է Հայոց Մեծ քուականին, քանի որ այս հատուածը անմիջապէս յաջորդում է վերադիրները գտնելու կանոնին, եւ դրա մէջ էլ հրահանգ է տրուած «վերցնել» Հայոց Մեծ քուականը եւ առաջնորդուել դրանով:

w.	p	գ	դ ե	զ	է	ա	ր գ	դ	ե	զ	է ա	ր	գ
դ	ե զ	է	ա	ր	գ դ	ե	զ	է	ա ր	գ	դ	ե	զ է

Այստեղ տրուած կանոնից ստանում ենք, որ հարկ է նախ Հայոց Մեծ թուականից հանել 5 եւ ապա տարբերութիւնը բաժանել 28ի ու վերցնել մնացորդը: Հայոց թուականի սկզբից 5 տարի ետ գնալով կը ստանանք Փ. $552 - 5 = 547$: Այսինքն՝ եօթներեակների կրկնման 28ամեայ պարբերութեան սկիզբն էլ ընդունուած է Փ. 547 թիւը: Սրա հետ մէկտեղ, եթէ հաշուենք Անդրէափ 200ամեակի սկզբից, կը ստանանք Փ. $352 + 7 \times 28 = 548$: Այս թուականների միջեւ կայ մէկ տարբերութիւն: Սխալը հէնց բանաձեւի մէջ է: Այսպէս. իրար հետ համեմատենք Անանիայի եւ Սարկաւագի ՇԼԲ աղիւսակների հռոմ. եօթներեակները եւ այս բանաձեւով ստացուածները: Օրինակ՝ Հայոց 35(լե) թուականի հռոմ. եօթներեակը Գ(3) է Անանիայի ՇԼԲ-ում²⁶, նոյնն է նաեւ Սարկաւագի ՇԼԲում²⁷: Հաշուենք նոյնը մեր քննարկած շարադրանքում տրուած բանաձեւով: $35 - 5 = 30$: Եւ $30 - 28 = 2$: Աղիւսակի երկրորդ վանդակում գրուած է Բ(2): Այլ օրինակ. Հայոց 55(ԾԵ) թուականի հռոմ. եօթներեակը Անանիայի եւ Սարկաւագի ՇԼԲ աղիւսակներում է(7) է: Մեր բանաձեւը տալիս է $55 - 5 = 50$: Եւ $50 - 28 = 22$: Աղիւսակիս 22րդ վանդակում էլ ունենք Զ(6):

Որպէսզի մեր բանաձեւը իրեն կից աղիւսակով տար եօթներեակների ճիշտ արժէքներ, հարկ էր, որ բանաձեւի մէջ տարեթուից հանելիք թիւը 5ի փոխարէն լինէր 4:

Եւ ընդհանրապէս, այս (եօթներեակները գտնելու) բանաձեւով սխալ են ստացւում նաեւ նահանջները: Օրինակ՝ Հայոց Լ(8) թուականը նահանջ է, ունի երկու եօթներեակ՝ ՚Ն, ՚Ե(4,5), իսկ մեր բանաձեւը կը տայ $8 - 5 = 3$: Աղիւսակիս երրորդ վանդակում էլ եօթներեակի միայն մէկ արժէք է՝ Գ(3): Ուրեմն, տարին չի կարող նահանջ լինել, այլ պիտի լինի սովորական: Այս պարագայում եւս, բանաձեւը կը տար նահանջ տարիների ճիշտ տեղերը, եթէ բանաձեւի մէջ 5ը փոխարինուած լինէր 4ով:

26 Անանիայի Շիրակայմոյ Համարողի մատենագրութիւնք, էջ 264:

27 Յովհամենէս Խմաստասէրի մատենագրութիւնը, ԱԲՐԱՀԱՄԵԱՆ, Ա. (աշխտ.), Երեւանի Համալսարանի երտ., Երեւան 1956, 191 (այսուհետ՝ Յովհ. Սարկաւագ):

Այս ամէնը հիմք է տալիս մտածելու, որ բանաձեւիս նախ-նականի մէջ թուականից հանելիք թիւը պիտի լինէր ոչ թէ 5, այլ 4:

Եթէ վերադիրները գտնելու բանաձեւի պէս այս բանաձեւում եւս Հայոց թուականը փորձենք փոխարինել Հռոմի հիմնադրման թուականով, հաշուած դրա երկրորդ հազարամետակի սկզբից՝ Փրկէ. 248 թուականից, ապա մեր բանաձեւը կը տայ սխալ արդիւնքներ: Ընդ որում, այդ սխալը չի շտկուի նաեւ բանաձեւի մէջ 5-ը 4-ով փոխարինելով²⁸: Որպէսզի այս բանաձեւը կից աղիւսակի հետ միասին հիմնուած լինէր Հռոմի թուականի վրայ, հարկ պիտի լինէր, որ տարեթուից հանուէր ոչ թէ 4 (կամ 5, ինչպէս մեր բնագրում է), այլ զրո (այսինքն՝ ոչինչ չհանուէր): Իրօք, Հռոմի եւ Հայոց թուականների տարբերութիւնը 304 տարի է, եւ դա էլ հաւասար է 10 հատ 28երեակի եւ եւս 24 տարուայ. $304 = 10 \times 28 + 24$: Այս 24ն էլ միայն 4ով է պակաս 28ամեայ պարբերազդանի տեւողութիւնից: Ուրեմն, եթէ մեր բանաձեւի մէջ զանց առնենք տարեթուից (ինչ-որ) թիւ հանելը, ապա բանաձեւը պիտի ճիշտ աշխատի Հռոմ. թուականով: Նայենք վերի օրինակներով: Հայոց 8 թուականը հաւասար է $8 + 304 = 312$ Հռոմի թուականին: Սա բաժանենք 28ի, կը ստացուի 4 մնացորդ. $312 - (11 \times 28) = 4$: Աղիւսակիս 4րդ վանդակում էլ կայ երկու եօթներեակ՝ Դ, Ե(4, 5), եւ սա էլ համընկնում է Անանիայի ՇԼԲում տրուածին: Յաջորդ օրինակը. Հայոց 35(ԼԵ) թուականի հռոմ. եօթներեակը Գ(3) է Անանիայի ՇԼԲում, նոյն է նաեւ Սարկաւագի ՇԼԲում (տե՛ս վերը): Մեր բանաձեւն այդ տարուայ համար կը տայ. Հայոց 35 թ. հաւասար է Հռոմի $35 + 304 = 339$: $339 - (12 \times 28) = 3$: Այսինքն 28ի բաժանելիս սատացուած մնացորդը 3 է: Աղիւսակիս 3րդ վանդակում էլ եօթներեակի արժէքը տրուած է հէնց 3(գ):

28 Օրինակ՝ եթէ փորձենք հաշուել նոյն՝ Հայոց 55 թուականի համար, կը ստանանք հետևեալը. Հայոց 55 թ. = Փրկէ. $55 + 552 = 607$ թ.: Փրկէ. 607 թ. = Հռոմի $607 - 248 = 359$ թ.: Ըստ մեր բանաձեւի՝ $359 - 5 = 354$: Այս 354ն էլ 28ի բաժանելիս տալիս է 18 մնացորդ: Եւ բանաձեւին կից աղիւսակում էլ ԺԼ. վանդակում (ստորին տողում՝ ձախից Դ. վանդակում) գրուած է «ա», այսիթքն՝ այդ տարուայ եօթներեակը պիտի լիներ ա(1): Սա չի համապատասխանում այդ տարուայ իրական եօթներեակին, որ՝ 7(է): Եւ եօթներեակի իրական արժեքն ստանալու համար այս պարագայում հարկ պիտի լիներ թուականից հանել ոչ թէ 5 (կամ 4), այլ 6:

Դժուար է միանչանակ ասել, թէ ի՞նչ կերպ է առաջացել այս սխալը: Զի բացառուում, որ դա հետեւանք լինի պարզ սխալմունքի: Հնարաւոր է նաեւ, որ սա առաջացած լինի Հայոց ՆԾԲ(452) թուականից յետոյ, երբ Մեծ թուականի տարեհաշուի մէջ մտել էր այսպէս կոչուած «եկամուտ տարին», եւ տարեթիւր մէկով աւելացել էր: Այս պարագայում բանաձեւիս նախնականում թուականից պիտի հանուէր ոչ թէ 5, այլ 4: Եթէ բանաձեւիս նախնական տարբերակում 5ի փոխարէն 4 եղած լինի, ապա կը ստացուի, որ այստեղ 28ամեայ պարբերաշրջանի սկիզբ պիտի ընդունուած լինի ոչ թէ 547, այլ 548 թուականը, այսինքն՝ Անդրէասի կիրառած 28երեակի սկիզբը: Եւ եթէ սա իրօք ճիշտ է, ապա սրանով կարելի է որոշակիացնել նաեւ այս հատուածի ստեղծման (կամ փոփոխման) ժամանակը: Այն պիտի լինի Փ. 1004ից 1116 թուականների միջակայքում²⁹: Այս սխալը եւ համապատասխան շտկումը հաշուի առնելով կը ստանանք, որ 28երեակի պարագայում եւս այս շարադրանքում պահպանուած է Անդրէասի 200եակի աւանդոյթը:

Բնական հարց է նաեւ այն, թէ ինչո՞ւ վերադիրների եւ եօթներեակների որոշման բանաձեւերը տրուած են տարբեր թուականների հիման վրայ: Դժուար է ենթադրել, թէ շարադրանքիս հեղինակը (ով էլ որ լինէր) հռոմէական վերադիրները հաշուելու բանաձեւը տար մի թուականով, իսկ հռոմէական եօթներեակների բանաձեւը՝ մէկ այլ թուականով: Եւ, ընդհանրապէս, տարօրինակ է նաեւ այն, որ հռոմէական օրացոյցին վերաբերող մակաչափերը գտնելու համար կիրառուած է ոչ թէ Հռոմի թուականը, այլ Հայոց թուականը:

Տեսնում ենք, այսպիսով, որ թէ' վերադիրների ու 19-երեակների, եւ թէ' եօթներեակների ու 28երեակների պարագայում այս շարադրանքի մէջ կան էական աղաւաղումներ: Թէ' եօթներեակները եւ թէ' վերադիրները այս շարադրանքի ցու-

29 Հայոց ՆԾԲ (452) թուականին նաւասարդի 1ը համընկել է գարնանամուտի օրուան (Մարտի 20ին) եւ դրանից յետոյ տարեհաշիւր մէկով աւելացել է: Իսկ դրանից 112 տարի անց Սարկաւագը շտկել է առաջացած սխալը, տարեհաշուից դուրս ճգելով «եկամուտ» տարին: Այսինքն՝ սխալը կարող էր առաջացած լինել Հայոց ՆԾԲ = Փրկչ. 1004 թուականից Փրկչ. 1116 թթ. միջակայքում: Այս մասին աւելի հանգամանալի տե՛ս ԲՐՈՒՏԵԱՆ Գ., Օրացոյց Հայոց, Մայր Արոռ Ս. Էջմիածին 1997, 116-117:

ցումների համաձայն հաշուարկելիս ստացւում են իրականին չհամապատասխանող արժէքներ: Միեւնոյն ժամանակ, քննութիւնը ցոյց է տալիս, որ թէ՛ մէկ եւ թէ՛ միւս դէպում ըստ մեր վերականգնումների՝ շարադրանքիս նախնական տարբերակում պիտի կիրառուած լինեն Անդրէաս Բիւզանդացու 19երեակների եւ 28երեակների համակարգերը: Եթէ սրա հետ գուգադրենք եւ այն, որ Անանիան իր տոմարական աշխատութիւններում ամէն կերպ հետեւել է Անդրէասի աւանդոյթին եւ իր ՇԼԲ աղիւսակն էլ կազմել է այնպէս, որ դա սկսուի Անդրէասի 19երեակով ու 28երեակով, ապա կարելի է եզրակացնել, որ այս շարադրանքի նախնականում եւս, ամենայն հաւանականութեամբ, պիտի եղած լինեն հէնց Անանիայի կիրառած համակարգերը: Սա էլ շատ հաւանական է դարձնում այն, որ շարադրանքիս հեղինակը եղած լինի հէնց Անանիան: Այսինքն՝ լուրջ հմք ունենք համարելու, որ խնդրոյ առարկայ շարադրանքը իր նախնական վիճակով մասն է եղել Անանիայի կազմած խառնախորանի:

Այս հիման վրայ կարելի է նաեւ փորձել վերականգնել հռոմ. վերադիրների եւ եօթներեակների վերը քննարկուած բանաձեւերի նախնական հեղինակային տարբերակները:

Հռոմ. վերադիրներին վերաբերող հատուածը վերը կատարուած քննութեան հիման վրայ հարկ կը լինի փոխարինել հետեւելով.

Կալ գրուականն Հռոռոմի .ք. թիւ ի բաց երբ եւ զայլն երբ .ժք.ժք. որ մնայ վերադրացդ տուր ի .ք էն սկսեալ. ուր դադարի վերադիր է տարոյն. պատուով .ժքն յոր տարի լինի, ք եւ ժ երեկի ամ է լաւ իմացիր:

P	h	w	Ժp	hq	η	Ժn	hq	t	Ժp	l	Ժw	hp	q	Ժη	hb	q	Ժt	hq
---	---	---	----	----	---	----	----	---	----	---	----	----	---	----	----	---	----	----

Հռոմ. եօթներեակների որոշման հատուածն էլ հարկ է փոխարինել հետեւելով.

Դարձեալ կալ գրվական եւ երբ .իլ. իլ. որ մնայ .է.երեակացդ տուր յառաջի այրէն սկսեալ ուր դադարի .է.երեակ է հռոռոմնց:

w	p	q	η	b	q	t	w	p	q	η	b	q	t	w	p	q	
η	b	q	t	w	p	q	t	b	q	t	w	p	q	t	b	q	t

Արդ տեսնենք, թէ ի՞նչ կերպ են բացատրուած մեզ հետաքրքրող սիւնակների տուեալները վերոբերեալ բնագրի մէջ:

Թէպէտ խառնախորանում սիւնակները տրուած են «վերադիրք...», «կիսակք...», «եօթներեակ...», «շաբաթագիր» հերթականութեամբ, դրան հակառակ բացատրական բնագրում առաջինը «շաբաթագիր» վերտառութեամբ սիւնակի բացատրութիւնն է: Ուստի հէնց դրանից էլ կը սկսենք:

Նախ նայենք խառնախորանի «շաբաթագիր» վերտառութեամբ սիւնակի բովանդակութիւնը: Խառնախորանում այս սիւնակի մէջ տրուած են 1ից 7 թուեր՝ աճման կարգով իրար յաջորդող, սկսեալ 1ից: Ընդ որում, այս շարքն անընդհատ կրկնում է տարուայ առաջին օրից մինչեւ տարուայ վերջը: Ըստ մեր խնդրոյ առարկայ շաբաթանքի՝ շաբաթագիրը բացատրուած է հետեւեալ կերպ: «Կալ զշարաքագիր աւուրն, եւ գ.է.երեակ տարոյն եւ գ.է. երբ որ մնայ պատկեր աւուրն է»: Այսինքն՝ ոեւէ օրուայ աւուր պատկերը գտնելու համար հարկ է տարուայ եօթներեակին³⁰ գումարել «շաբաթագիր» սիւնակում այդ օրուայ դիմաց եղած թիւը, ստացուած գումարից, եթէ այն եօթից մեծ է, հանել եօթ, եւ տարբերութիւնը հէնց կը լինի մեզ հետաքրքրող օրուայ որոնելի աւուր պատկերը: Օրինակ՝ եթէ տարուայ եօթներեակը/թ(5) է, եւ կամենում ենք գտնել Յունուարի 6ի աւուր պատկերը, ապա նայում ենք «շաբաթագիր» սիւնակը, տեսնում ենք, որ Յունուարի 6ի դիմաց գուրուած է Զ(6), եօթներեակին գումարում ենք շաբաթագրի արժէքը, ստանում՝ $5 + 6 = 11$: Ստացուած գումարը եօթից մեծ է, ուստի դրանից հանում ենք եօթ եւ ստանում՝ $11 - 7 = 4$, այսինքն՝ չորեքշաբթի: Ահա եւ այս տարբերութիւնն էլ կը լինի մեր որոնած աւուր պատկերը: Ուրեմն, Ե(5) եօթներեակով տարուայ Յունուարի 6-ը կը լինի չորեքշաբթի:

30 Եօթներեակը մէկից եօթ արժէքներ ընդունող օրացուցային մի մակաչափ է, որ կիրառում է տարուայ կամայական օրուայ աւուր պատկերը (շաբաթուայ ինչ օր լինելը) գտնելու համար: Հին տոմարում եօթներեակը բոււապէս հաւասար է տարեմուտի նախորդ օրուայ աւուր պատկերին (եթէ տարեմուտի նախորդ օրը կիրակի է, ապա եօթներեակը հաւասար է 1ի, եթէ երկրոշաբթի է, ապա հաւասար է 2ի, եթէ երեքշաբթի է՝ 3ի եւ այլն): Նոր տոմարի պարագայում եօթներեակի իմաստը փոքր-ինչ այլ է, սակայն այստեղ մենք դա հաշուի չենք առնի եւ բոլոր օրացուցային իրողութիւնները կը դիստրկենք միայն Հին տոմարի առումով:

Այս կանոնը ստուգելի է ոչ միայն օրինակների միջոցով, այլ նաև պարզ դատողութիւններով: Այսպէս. եօթներեակը ըստ իր իմաստի եւ սահմանման թուապէս հաւասար է տարեմուտի նախորդ օրուայ աւուր պատկերին³¹: Ուրեմն, դրա յաջորդ օրուայ՝ Յունուարի 1ի աւուր պատկերը կը լինի եօթներեակին գումարած 1, Յունուարի 2ինը կը լինի եօթներեակին գումարած 2, ... եւ այսպէս՝ շարունակ: Հէնց գումարը եօթից մեծ ստացուի, հարկ է դրանից հանել եօթ եւ վերցնել տարբերութիւնը: Այսինքն՝ տարուայ կամայական օրուայ աւուր պատկերը հաւասար է այդ տարուայ եօթներեակին գումարած որոնելի օրուայ հերթական համարը՝ հաշուած տարեմուտից եւ ստացուած գումարից հանած այնքան հատ 7, մինչեւ մնայ 7ից ոչ մեծ թիւ: Խսկ «չաբաթագիր» սիւնակում թուերը հէնց այդպէս էլ տրուած են. այստեղ ունենք 1ից 7 աճման կարգով անընդհատ իրար յաջորդող թուերի շարք: Այսինքն՝ տարուայ կամայական օրուայ դիմաց այս սիւնակում եղած թիւը հաւասար է նախորդ Դեկտեմբերի 31ից մինչ այդ օրը եղած օրերի քանակից ամբողջ թուով եօթնեակներ (չաբաթներ) հանելուց յետոյ մնացած տարբերութեանը:

Ցանկը մեր բնագրի մէջ «եօթներեակ հոռոմոց» վերտառութեամբ սիւնակի կարճառօտ բացատրութիւնն է:

Խառնախորանում «եօթներեակ հոռոմոց» վերտառութեամբ սիւնակում տրուած են նուազման կարգով դասաւորուած՝ 7ից 1 թուեր՝ 7ից սկսեալ: Եւ թուերի այս շարքերը անընդհատ յաջորդում են իրար՝ սկսեալ Յունուարի 1ից մինչեւ Դեկտեմբեր 31ը:

Բնագրում այս մասին կայ. «ի դիմաց .է.երեկին կիրակի է»: Այսինքն՝ այս սիւնակի թուերի մէջ գտնում ենք այն տողերը, որոնցում առկայ թուերը համընկնում են տարուայ եօթներեակին: Ահա այդ տողերին համապատասխանող օրերն էլ տուեալ տարում կը լինեն կիրակիները: Օրինակ՝ դարձեալ դիտարկենք այն դէպքը, երբ տարուայ եօթներեակը Ե(5) է: Խառնախորանի Յունուար ամսի աղիւսակում գտնում ենք, որ ամսի Գ(3)ի,

31 Անշուշտ, խօսքը միայն Հոռոմէական Հիմ տոմարին մասին է, նոր տոմարի պարագայում վիճակը տարբեր է: Սակայն խնդրոյ առարկայ խառնախորանը ստեղծուել եւ կիրառուել է այն ժամանակներում, երբ տակաւին չի եղել նոր տոմարը: Ըստ այսմ, մեր խնդրի սահմաններում լիովին նիշտ է իրեն Հոռոմէական օրացոյց դիտարկել միայն Հիմ տոմարի տարբերակը:

Ժ(10)ի, Ժէ(17)ի, ԻԴ(24)ի եւ ԼԱ(31)ի դիմաց «Եօթներեակ հոռոմոց» սիւնակում առկայ է Հէնց տարուայ Եօթներեակի արժէքը՝ Ե(5): Ուրեմն, Ե(5) Եօթներեակով տարիներում Յունուարի Յը, 10ը, 17ը, 24ը եւ 31ը կը լինեն կիրակի: Սա եւս ստուգելի է ոչ միայն օրինակներով, այլ նաև պարզ դատողութիւններով: Այսպէս. քանի որ մեր սիւնակում տրուած են 7ից 1 նուազման կարգով անընդհատ իրար յաջորդող թուեր, ուրեմն տարուայ Եօթներեակի թուային արժէքը այս սիւնակի առաջին տողից ներքեւ կը լինի այնքան, որքան որ տուեալ Եօթներեակի արժէքը փոքր է 7ից: Այսինքն՝ դա կը լինի աղիւսակի այն տողում, որի համարը հաւասար է այդ տարբերութեանը գումարած մէկ: Միւս կողմից էլ՝ գիտենք, որ տարուայ Եօթներեակը թուապէս հաւասար է տարեմուտի նախորդ օրուայ աւուր պատկերին, ուրեմն, եթէ Եօթներեակին գումարենք նրա թուային արժէքին համապատասխան տողի հեռաւորութիւնը սիւնակի սկզբից, ապա կը ստանանք Հէնց Եօթ գումարած մէկ: Ուրեմն, տարուայ Եօթներեակի թուային արժէքը այս ձեւով կառուցուած սիւնակում իրօք պիտի համապատասխանի կիրակիին³²: Սա ճիշտ է առաջին Եօթ տողերի համար, սակայն քանի որ սիւնակում թուերը կրկնուած են անընդհատ Եօթական պարբերութեամբ, այս նոյն դատողութիւնները կիրառելի են սիւնակի մնացեալ հատուածների համար եւս:

Արդ, նայենք «Վերադիրք Հոռոմոց» սիւնակի բացատրութիւնը:

Խառնախորանի մէջ «Վերադիրք Հոռոմոց» վերտառութեամբ սիւնակը (ի դէպ, դա խառնախորանի ձախ էջի առաջին սիւնակն է) պարունակում է 30ից 1ը թուեր՝ շարուած նուազման կարգով, սկսեալ Յունուարի 1ի դիմաց 29ից մինչեւ Դեկտեմբեր 31ի դիմաց 19: Ընդ որում, ի տարբերութիւն քննարկո-

32 Սա աւելի դիւրին կարելի է բացատրել՝ ասուածը գրելով բանաձեւային տեսքով: Նշանակենք տարուայ Եօթներեակը Ե-ով, իսկ խնդրոյ առարկայ սիւնակում տարուայ Եօթներեակին համապատասխանող առաջին տողի համարը՝ Տ-ով: Նշանակենք նաև աւուր պատկերը՝ Ա-ով: Այս պարագայում կ'ունենամք. $S = 7 - \xi + 1$: Միւս կողմից՝ $U = \xi + S$: Եթէ տեղադրենք S -ի արժէքը առաջին հաւասարումից երկրորդի մէջ, կը ստանանք. $U = \xi + S = \xi + 7 - \xi + 1 = 7 + 1$: Բնականարար, 7ը իրբեւ պարբերութիւն զանց է առնուամ, եւ մնում է մէկը: Այսինքն՝ այս կերպ եւս որոնելի աւուր պատկերի համար ստանում ենք 1, այսինքն՝ Միաշարաք = Կիրակի:

ւած նախորդ երկու սիւնակների, այս սիւնակում երբեմն որոշ տողերում թուերը բաց են թողնուած: Սակայն թուերի հերթական կարգը խախտուած չէ (տե՛ս վերը բերուած լուսանկարը եւ դրա աղիւսակային ներկայացումը): Բաց է թողնուած հէնց Յունուարի 1ի դիմաց լինելիք 29ը: Հասկանալու համար, թէ ո՞րն է այս բացթողումների պատճառը, յիշենք, որ վերադիրը, թէպէտ ընդունում է 1ից 30 արժէքներ, այդուհանդերձ, ամէն արժէք չի ընդունում: 19ամեայ պարբերաշրջանի մէջ վերադիրները իրար յաջորդում են 11ական աւելանալով: Այս պատճառով էլ 1-30 միջակայքի ոչ բոլոր թուերն են «մատչելի» վերադիրի համար: Ահա, մեր խնդրոյ առարկայ սիւնակում գրառուած են վերադիրների միայն «թոյլատրելի» արժէքները: Իսկ բաց թողնուած վանդակները համապատասխանում են վերադիրների համար «արգելուած» արժէքներին:

Մեր շարադրանքում այս սիւնակի թուերի կիրառութեան կերպի մասին ունենք. «Տես զիերադիր տարոյն յոր ամիս որ կամիս. ի դիմացն ծնունդ է լուսնի: Ի դեպ ի վայր թվէ զաւուրս ամսոյն ժեւ. լրումն է լուսնի. ի նահանջի ամի ի մարտէ մինչեւ ի յաւարտ տարոյն յաւուրս լուսնին .ա. յաւել»: **Ըստ** այս բացատրութեան՝ այս սիւնակի թուերի կիրառման կերպը համանման է «եօթներեակ Հոռոմոց» սիւնակի թուերի կիրառութեանը: Այսինքն՝ մեզ հետաքրքրող ամսի աղիւսակում այս սիւնակում գտնում ենք տարուայ վերադրի³³ արժէքին հաւասար թիւը, եւ դրան համապատասխանող տողի օրն էլ կը լինի տուեալ ամսի Լուսնի ծնունդը (նորալուսինը): Դրանից 15 օր ներքեւ կը լինի Լուսնի լրման օրը (լիալուսինը): Իսկ նահանջ տարիների պարագայում հարկ է Մարտ ամսից մինչեւ տարեվերջ Լուսնի օրերը մէկով աւելացնել: Ճիշտ է, այստեղ Լուսնի փուլերը կամայական օրուայ համար գտնելու ուղղակի կերպը տրուած չէ, սակայն հասկանալի է, որ ունենալով նորալուսնի եւ լիալուսնի օրերը, միանգամայն հնարաւոր է հաշուել դրանց միջեւ եղած Լուսնի

33 Վերադիրը մէկից երեսում արժէքները ընդունող օրացուցային մի մակաշափ է, որ կիրառում է տարուայ կամայական օրուայ Լուսնի փուլը գտնելու համար: Թուապէս տարուայ վերադիրը հաւասար է տարեմուտի նախորդ օրուայ Լուսնի փուլին: Տարուայ կամայական օրուայ Լուսնի փուլը հաւասար է այդ օրուայ հերթական համարի եւ վերադրի գումարին (եթէ գումարը 30ից մեծ է, ապա դրամից հանում ենք 30 այնքան անգամ, միշեւ մնայ 30ից փոքր թիւ):

կամայական փուլ: Փաստօրէն, Լուսնի փուլերը Մարտի սկզբից մինչեւ տարեվերջ մէկով աւելացնելը (նահանջ տարիների պարագայում) հէնց այս կերպ Լուսնի օրերը հաշուելուն պիտի վերաբերի:

Նայենք մի օրինակ: Դիցուք, տարուայ վերադիրը 25(իԵ) է. մեր խառնախորանի Յունուարի աղիւսակում գտնում ենք «վերադիրք հոռոմոց» սիւնակում 25(իԵ) պարունակող տողը: Դա Յունուարի Ե(5)ի տողն է: Ահա, Յունուարի 5ն էլ կը լինի տուեալ տարուայ Յունուար ամսի նորալուսնի օրը. դրանից 15 օր անց, այսինքն՝ Յունուարի 5 + 15 = 20ին էլ կը լինի Լուսնի լրումը:

Այս օրինակը ինքը եւս ստուգելի է: Իրօք, եթէ տարուայ վերադիրը 25 է, նշանակում է, ըստ վերադիրի սահմանման եւ իմաստի, որ տարեմուտի նախորդ օրը, այսինքն՝ Դեկտեմբերի 31ին Լուսինը եղել է 25 օրական: Հետեւաբար, դրա յաջորդ օրը՝ Յունուարի 1ին այն կը լինի $25 + 1 = 26$ օրական, Յունուարի 2-ին՝ 27 օրական, ... եւ Յունուարի 5-ին՝ 30 օրական, որ հէնց նորալուսինն է: Նորալուսնից 15 օր անց էլ, բնականաբար, կը լինի Լուսնի լրումը:

Այս սիւնակի կիրառման բացատրութիւնը եւս, ինչպէս նախորդ դէպքերում, օրինակներով ստուգուելուց զատ ենթակայ է նաև տրամաբանական ստուգման, սակայն շարադրանքը չծանրաբեռնելու համար զանց առնենք այդ դատողութիւնները:

Խառնախորանի «վերադիրք հոռոմոց» սիւնակի վերաբերեալ հարկ է աւելացնել նաեւ, որ այստեղ ներկայացուած վերադիրների յաջորդական կարգը համապատասխանում է Սարկաւագի կիրառած հոռմ. վերադիրներին (11, 22, 3, 14, 25, 6, 17, 28, 9, 21, 2, 13, 24, 5, 16, 27, 8, 19, 30): Սրանք, ինչպէս գիտենք, երկուական մեծ են Անանիայի կիրառած շարքի համապատասխան վերադիրներից: Բնականաբար, Անանիայի կազմած խառնախորանում պիտի լինէր ոչ թէ վերադիրների այս շարքը, այլ Անանիայի կիրառած շարքը (9, 20, 1, 12, 23, 4, 15, 26, 7, 19, 30, 11, 22, 3, 14, 25, 6, 17, 28): Սակայն այս շարքերի փոփոխութիւնը բնաւ չէր անդրադառնայ խառնախորանի համապատասխան սիւնակում ներկայացուած թուերին: Բանն այն է, որ անկախ Անանիայի թէ Սարկաւագի վերադիրների շարքը կիրառելուց, միեւնոյն է, սիւնակի բովանդակութիւնից ելնելով՝ անպայման է, որ Յունուարի 1ի դիմաց լինի այս սիւնակում վե-

ըադրի արժէքը 29, Յունուարի 2ի դիմաց՝ 28 եւ այսպէս շարունակ մինչեւ վերջ: Տարբեր շարքերի կիրառումից կախուած՝ կարող էր լինել միայն այն, թէ այս սիւնակում վերադիրների ո՞ր արժէքներն են ներկայացւում եւ որո՞նք բաց թողնուում:

Արդ, անցնենք առաջ:

Վերոնշեալ բացատրութիւններին մեր բնագրի մէջ յաջորդում է Առաջաւորի լրման ամսաթիւը, աւուր պատկերը եւ ապա հէնց Առաջաւորը գտնելու կանոնը. «Առաջաւորի լրումն այսպէս արա. գիտ զվերադիր տարոյն ի յունվարի չորիցն եւ ի փետրվարի երիցն ի մէջն. եւ ի վերադրին դիմացէն բվէ դէպ ի վայր գաւուրս ամսոյն .գ. ի նահանջի .է. լրումն է. ի լրմանէն ի վայր գիտ գ.է.երեակն տարոյն. ի դիմացն առաջաւոր է: Պատկեր աւուր լրման առաջաւորին եւ աւագ լրմանն մի է»: Ի՞նչ է այստեղ ասուած: Առաջաւորի լրումը գտնելու համար հարկ է Յունուարի չորսի եւ Փետրուարի երեքի միջեւ ընկած հատուածում (չի նշուած, թէ ո՞ր սիւնակում) գտնել տարուայ վերադրին համապատասխանող արժէքը, ապա դրա տողից վար իջնել ճ տող (եթէ տարին նահանջ է, ապա՝ 7 տող), եւ գտնուած տողում կը լինի Առաջաւորի լրման որոնելի ամսաթիւը: Այս լրման օրուայ տողից դէպի վար գտնում ենք տարուայ եօթներեակը, եւ այդ եօթներեակի տողում էլ Առաջաւորի տօնի ամսաթիւն է: Ապա աւելացւում է, որ Առաջաւորի լրման օրուայ աւուր պատկերը նոյնն է, ինչ եւ աւագ լրման աւուր պատկերը:

Բնագրիս այս հատուածը հասկանալու եւ դրա կիրառութեան կերպը պարզելու համար հարկ է նախ պատասխանել երկու հարցի:

ա. Խառնախորանի ո՞ր սիւնակի թուերին է սա վերաբերում,

բ. Ի՞նչ է նշանակում «Առաջաւորի լրումն» արտայայտութիւնը:

Առաջին հարցին պատասխանելու համար նախ նկատենք, որ մեզ հասած խառնախորաններում չկայ «Առաջաւորի լրումն» վերտառութեամբ սիւնակ: Միակ սիւնակը խառնախորանի մեջ հասած տարբերակում, որի մէջ կան վերադիրներ կամ Լուսնի փուլին առնչուող ինչ-որ թուեր, «Վերադիր Հոռոմի» սիւնակն է: Հստ այսմ, սոյն կանոնի կիրառումը հնարաւոր է պատկերացնել երկու տարբեր կերպ: մէկը՝ ընդունելով, որ այս կանոնի հրահանգները նախատեսուած են «Վերադիր Հոռոմի» սիւնակի թուե-

ըի միջոցով կիրառելու համար, միւսը՝ ենթադրելով, որ կանոնիս հրահանգները նախատեսուած են մի այլ՝ կորած, մեզ չհասած սիւնակի միջոցով կիրառելու համար:

Բնական է՝ հարկ է նախ փորձել այս հրահանգի կիրառութիւնը խառնախորանում առկայ «վերադիր Հոռոմի» սիւնակի թուերի միջոցով։ Միեւնոյն ժամանակ, հասկանալի է, որ նշեալ սիւնակի միջոցով (կամ այլ կերպ) այս հրահանգի կիրառութիւնը ստուգելու համար հարկ է նախ պատասխանել մեր երկրորդ հարցին, այն է՝ հասկանալ, թէ ի՞նչ է նշանակում «Առաջաւորի լրումն» արտայայտութիւնը։

«Առաջաւոր» կոչուածը կրնատ գրութիւնն է «Բարեկենդան Առաջաւորի պահոց» կոչուող տօնի, որ Հայաստանեայց եկեղեցու առանձնայատուկ կարեւոր տօներից է՝ սահմանուած տակաւին Ս. Գրիգոր Լուսաւորչի կողմից։ Ըստ նախապէս սահմանուած կարգի՝ այն միշտ տօնուում է Զատիկից 70 օր առաջ։ Այսինքն, սա եւս, ինչպէս Զատիկը՝ կիրակի է։ «Լրումն» բառը տոմարում ունի նախ եւ առաջ Լուսնի լրման (լիալուսնի) իմաստ։ Յայտնի է Զատիկին նախորդող՝ զատկական լրումը, որ Լուսնի առաջին գարնանային լրումն է, կոչուում է նաեւ «աւագ լրումն»։

Առաջին հայեացքից տրամաբանական է թւում «Առաջաւորի լրումն» արտայայտութիւնը հասկանալ իբրեւ Լուսնի ինչոր լրում, որ կապուած է Առաջաւորի տօնի հետ։ Մեր բնագրի բացարութիւնից էլ հետեւում է, որ այս «Առաջաւորի լրում»ը մի քանի օրով (ոչ աւելի, քան 7 օրով) նախորդում է բուն Առաջաւորի տօնին³⁴։ Սակայն այս արտայայտութեան նման ընկալումը հակասում է նոյն բացարութեան մէջ առկայ այլ իրողութիւններին։ Այսպէս։

Կանոնիս վերջին մասում ասուած է. «Պատկեր աւուր լրման առաջաւորին եւ աւագ լրմանն մի է։ Այսինքն՝ այս «Առաջաւորի լրման» աւուր պատկերը՝ նոյնն է, ինչ միեւնոյն տարուայ Լուսնի

34 Մեր բնագրում ունենք. «... լրումն է. ի լրմանէն ի վայր գիտ գ.է.ե. բեակն տարդյմ. ի դիմացմ առաջաւոր է։ Այստեղ ասում է, որ Առաջաւորի լրումից վար գտնուող եօթներեակի դիմաց բուն Առաջաւորն է։ Խակ եօթներեակները «եօթներեակ Հոռոմոց» սիւնակում 7 պարբերութեամբ կրկնուող 1ից 7 բուերն են։ Ուստի, ըստ այս բացարութեամ, չի կարող Առաջաւորի լրումից մինչ Առաջաւոր ժամանակը 7 օրից աւելի լինել։

աւագ (գատկական) լրման աւուր պատկերը: Սա նշանակում է, որ այս «Առաջաւորի լրման» օրից մինչեւ աւագ լրման օրը պիտի լինեն անպայման 7ի պատիկ թուով օրեր: Աւագ լրումից Զատիկ միջոցը կարող է լինել 1ից 7 օր (կախուած տարուց): Բուն Առաջաւորի եւ Զատիկի միջեւ ժամանակը 70 օր է:

Ստացում է հետեւեալը. Լուսնի աւագ լրման եւ «Առաջաւորի լրման» օրերի միջեւ մի կողմից պիտի լինեն 7ի պատիկ թուով օրեր (որպէսզի այդ երկու օրերն էլ միեւնոյն աւուր պատկերն ունենան), միւս կողմից էլ՝ որպէսզի «Առաջաւորի լրումը» լինի Լուսնի լրման օր, հարկ է, որ այս նոյն միջակայքում «տեղաւորուեն» ամբողջ թուով լուսնային ամիսներ (որպէսզի այդ երկու օրերն էլ լինեն Լուսնի լրման օրեր): Այսինքն՝ այս երկուսի միջեւ եղած օրերի քանակը պիտի առանց մնացորդի բաժանուի թէ՛ 7ի եւ թէ՛ 30ի: Քանի որ 7ը պարզ թիւ³⁵ է, ապա ամենափոքր թիւը, որի համար այս պայմանը տեղի ունի, $7 \times 30 = 210$ է: Այսինքն՝ միեւնոյն աւուր պատկերը Լուսնի երկու լրումները կարող են ունենալ, եթէ իրարից հեռու են առնուազն եօթն ամսով: Զատկական լրումից 210 օր (եօթն ամիս) առաջ ոչ Առաջաւոր կարող է լինել, եւ ոչ էլ Առաջաւորի հետ կապուած ոեւէ այլ տօն կամ օր: Նշանակում է՝ մեր բնագրի մէջ «Առաջաւորի լրումն» եզրը կապ չունի Լուսնի լրման հետ:

Եթէ վերոբերեալ հատուածը աղաւաղեալ չէ, ապա «Առաջաւորի լրումն» անուան տակ ի նկատի պիտի առնուած լինի մեր ենթադրածից տարբեր մի բան. ամէն պարագայում դա չպիտի նշանակի Լուսնի լրման (լիալուսնի) օր: Այսպիսով, պարզեցինք, թէ մեր բնագրում ի՞նչ իմաստ չի կարող ունենալ «Առաջաւորի լրումն» եզրը: Մրանով էապէս դիւրանում է պարզելը, թէ ի՞նչ է դա նշանակում:

Սկսենք նրանից, որ, ամէն պարագայում, դա պիտի նշանակի Լուսնի փուլերի հետ կապուած մի իրողութիւն, քանի որ դրա օրը որոշուում է վերադիրների միջոցով (իսկ վերադիրը միշտ ունի Լուսնի փուլի իմաստ): Հստ մեր բնագրի տուած կանոնի՝ դա պիտի լինի նորալուսնից ճ կամ 7 օր յետոյ: Նկատենք, որ այստեղ մի փոքր անհամաձայնութիւն կայ այս օրուայ

35 Թուարանութեան մէջ պարզ են համարում այն բուերը, որոնք իրենք իրենցից եւ մէկից զատ ոչ մի այլ բուի վրայ առանց մնացորդի չեն բաժանում:

մասին տրուած երկու տեղեկութիւնների միջեւ: Աւագ լրումից 70 օր առաջ լինելը եւ նորալուսնից 6 (կամ 7) օր առաջ լինելը իրար հակասում են: Իրականում, որպէսզի այդ օրը լինի աւագ լրումից 70 օր առաջ, անհրաժեշտ է, որ լինի նորալուսնից ոչ թէ 6 (կամ 7) օր առաջ, այլ 5 (կամ 6) օր առաջ: Իրօք, աւագ լրման հետ միեւնոյն աւուր պատկերը (շաբաթուայ միեւնոյն օրը) ունենալը նշանակում է, որ դա Լուսնի աւագ լրումից 70 օր առաջ է, եւ, ըստ այդմ, կը լինի լիալուսնից 70 - 2 - 30 = 10 օր առաջ: Եթէ լիալուսինն էլ հաշուենք 15 օրական, ապա դա կը լինի Լուսնի 15 - 10 = 5 օրական փուլը: Եւ 5 օրական Լուսինն էլ, հասկանալի է, նորալուսնից 5 օր յետոյ պիտի լինի: Բնագրի այս մասում սխալ կամ վրիպակ լինելը քիչ հաւանական է, քանի որ այդ թիւը տրուած է երկու ձեւով: սովորական տարիներին՝ 5 օր, նահանջ տարիներին՝ 6 օր: Այստեղ նահանջ տարիների համար տրուած այս 6 օրը իր իմաստով նոյնն է, ինչ սովորական տարիների համար տրուած 5 օրը: Հաւանականութիւնը շատ փոքր է, որ երկու տեղում էլ վրիպակ լինէր, եւ այդ երկու վրիպակն էլ իրականից շեղուած լինէին միեւնոյն ուղղութեամբ եւ միեւնոյն չափով: Ուրեմն բնագրի այս մասում տրուած թուերը հարկ է համարել հարազատ: Եւ որպէսզի այս թուերով ստացուի ճիշտ արդիւնք, հարկ է, որ տարբեր լինի դրանց կիրառման կերպը: Այստեղ յիշենք, որ Հռոմէական օրացոյցում (եւ դրա հետեւողութեամբ էլ քրիստոնէական տօնացոյցում) կիրառուել է ժամանակային միաւորների «ներառեալ» հաշուարկի եղանակը: Սրա էութիւնն այն է, որ ժամանակային միջակայքեր տալիս հաշուարկի մէջ ներառուել են խնդրոյ առարկայ միջակայքի երկու ծայրակէտերը միաժամանակ: Սրա բազմաթիւ օրինակներից յիշատակենք միայն մէկը. բոլորս գիտենք, որ Համբարձման տօնը Զատիկից 40 օր յետոյ է: Այդպէս է ընդունուած մտածել եւ ասել եւ գրել: Իրականում, սակայն, Համբարձումը Զատիկից միայն 39 օր յետոյ է. այն Զատիկից հաշուած 40-րդ օրն է: Եւ այս 40ը ստացւում է, եթէ հաշուարկի մէջ ներառում ենք թէ՝ Զատիկի, եւ թէ՝ Համբարձման օրերը միաժամանակ:

Ահա այս կերպ էլ հարկ է հասկանալ մեր բնագրի հրահանգը: Այսինքն՝ հարկ է հաշուարկի մէջ ներառել նաեւ բուն նորալուսնի օրը: Այդ պարագայում «Առաջաւորի լրումն» կոչուած օրը կը լինի նորալուսնից հաշուած ճրդ օրը, բայց ոչ՝ 6 օր յետոյ, այլ 5 օր յետոյ: Եւ այս կերպ այդ օրուայ աւուր պատկերը կը նոյնանայ աւագ լրման աւուր պատկերի հետ:

Այսպիսով, պարզուեց, որ «Առաջաւորի լրումն» արտայայ-
տութիւնը նշանակում է աւագ լրումից 70 օր առաջ եղած օրը,
որը նորալուսնից 5 օր յետոյ է եւ նախորդում է Առաջաւորի
Բարեկենդանին (ոչ աւելի, քան 7 օրով): Միեւնոյն ժամանակ,
պարզուեց, որ Առաջաւորի լրման օրը գտնելը կատարւում է
«վերադիր Հոռոմի» սիւնակի միջոցով (քանի որ բնագրում
տրուած հրահանգը ամբողջովին կատարելի է այս սիւնակի թու-
երի միջոցով):

Յաջորդ բացատրութիւնը խառնախորանի սիւնակների մի-
ջոցով Զատիկը գտնելու մասին է: «Գիտ զվերադիր տարոյն ի
մարտի չորիցն եւ ապրիլի երիցն ի մեջն. եւ վերադրին դիմացէն
թուէ զաւուրս ամսոյն .ժէ. աւագ լրումն է որ է առաջի լուսին տա-
րոյն. եւ ի .ե.երեակն էջ զատիկ է եւ եթէ .ե.երեկն ի լրմանն ի դէմ
հանդիպի ի միւսն էջ զատիկ է»: Այստեղ հրահանգ է տրում «վե-
րադիր Հոռոմոց» սիւնակում գտնել տարուայ վերադրին հաւա-
սար թիւը Մարտի չորսից Ապրիլի երեքի միջակայքում, ապա
դրանից հաշուել 17 օր եւ դա կը լինի աւագ լրումը, ապա
դրանից ներքեւ գտնել եօթներեակը, որն էլ կը լինի հէնց Զա-
տիկը: Այստեղ ակնյայտ վրիպակ է «17»-ը: Տարուայ վերադրին
համապատասխան թիւը գտնելով մենք գտնում ենք նորալուսնի
օրը: Իսկ Լուսնի (աւագ) լրումը, բնականաբար, պիտի լինի
դրանից 15 օր յետոյ³⁶:

Այստեղ ճգրտման կարուտ է նաեւ հէնց միջակայքն ինքը:
Այսպէս. այստեղ վերադրի փոփոխման միջակայքի համար
տրուած է Մարտի 4ից մինչ Ապրիլի 3ը: Սա 31օրեայ միջակայք
է: Իսկ Լուսնի փուլերի պարբերութիւնը վերադրիների համա-
կարգում ընդունուած է 30 օր: Եւ, ընդհանրապէս, Լուսնի փու-
լերին վերաբերող պարբերութիւնը չի կարող 30 օրից մեծ լի-
նել: Բնականաբար, հարկ է այս նշուած միջակայքի օրերի քա-
նակը փոքրացնել մէկով: Ամենաբնական միջոցը միջակայքի եղ-
րակէտերից մէկն ու մէկը զանց առնելն է: Նայենք, թէ ո՞ր մէկը
պէտք է զանց առնել: Նախ նայենք սկզբնակէտը: Եթէ վերադրի
արժէքը համընկնի Մարտի 4ին, դրան յաւելենք 15, կը ստա-
նանք Մարտի 19ը: Սա գարնանամուտից մէկ օր առաջ է³⁷, այ-

36 Սա ակնյայտ ե - է ամենատարածուած շփոքութիւններից է՝ պայմանաւո-
րուած այդ թուերը նշանակող տառերի նմանութեամբ:

37 Ի դեպ, այստեղից եւս հետեւում է, որ այս հատուածում տրուած 17ը
հարկ է շոկել եւ դարձնել 15: Իրօք, եթէ այս նոյնը հաշուէինք 17ով, ա-

սինքն՝ աւագ լրում չի կարող լինել: Եթէ վերադրի արժէքը համբնկնի Ապրիլի 3ին, դրան յաւելենք 15, կը ստանանք Ապրիլի 18ը: Սրան էլ, եթէ յաւելենք 7 օր (այն պարագայում, եթէ լրման օրը կիրակի պատահի, եւ, դա զանց առնելով, վերցուի յաջորդ կիրակին), ապա կը ստանանք Ապրիլի 25ը, որ իրօք Զատիկի համար հնարաւոր ամենառու ամսաթիւն է: Բացի այդ, եթէ այս (Ապրիլի 18) ամսաթուից 30 օր (մէկ ամիս) ետ գնանք, կը ստանանք, որ դրա նախորդ լրումը Մարտի 19ին պիտի լինի: Եւ գիտենք նաեւ, որ գարնանամուտի համար հայ տոմարագիտութեան մէջ ընդունուած ամսաթիւը Մարտի 20ն է: Այսինքն՝ ստանում ենք, որ սա վերջին սահմանն է, երբ լիալուսինը դեռ գարնանային չէ. դրանից մէկ օր անց արդէն լիալուսինը կը լինի Մարտի 20ին, եւ այն կը համարուի գարնանային: Սա եւս ցոյց է տալիս, որ Ապրիլի 3ը վերադիրների փոփոխման միջակայքի մէջ պէտք է լինի: Ուրեմն, պիտի զանց առնուի Մարտի 4ը: Նշանակում է, այստեղ միջակայքերի ներկայացման ձեւն այնպիսին է, որ սկզբնակէտը հաշուարկի մէջ պէտք չէ մտցնել³⁸: Այս ճշգրտումներով Զատիկին վերաբերող հրահանգը դառնում է լիովին կիրառելի:

պա կը ստանայինք իբրեւ աւագ լրման բոյլատրելի սահմանի սկզբնակետ Մարտի 21ը: Սա անընդունելի է, քանի որ հայկական տոմարական աւանդոյթում գարնանամուտի կայուն օր է ընդունուած Մարտի 20ը: Իսկ վերոնշեալ կերպով հաշուարկելով Մարտի 20ը (գարնան առաջին օրը)³⁹ դուրս է մնում գարնանային լիալուսնի համար հնարաւոր բոյլատրելի արժէքներից: Եթէ Մարտի 4ը իբրեւ վերադիրների արժէքների փոփոխման միջակայքի սկզբնակետ զանց առնենք, ապա այս նոյնը հարկ պիտի լինի հաշուել Մարտի 5ից, որ արդէն աւագ լրման համար կը տայ իբրեւ ամենավաղ հնարաւոր արժէք՝ Մարտի 22ը: Սա առաւել եւս անընդունելի է: Այսինքն՝ այս փոքրիկ ժննաւթիւնը ցոյց է տալիս, որ ե՛ւ մեր բնագրի այս հատուածում պէտք է վերադրին յաւելուելիք թիւը 17ից շուկել դարձնել 15, ե՛ւ հարկ է զանց առնել միջակայքի սկզբի օրը եւ դիտարկել Մարտի 5ից Ապրիլի 3 միջակայքը (ներառեալ ծայրակետերը):

38 Բնականաբար, այս նոյն մօտեցումը պիտի կիրառել նաեւ Առաջաւորի լրումը եւ հենց Առաջաւորը գտնելու հրահանգում տրուած միջակայքին. այստեղ էլ, փաստօրէն, պէտք է միջակայքից դուրս բռնել Ցունուարի 4ը:

Յաջորդ հրահանգը վերաբերում է Զատիկից յետոյ եկող տօներին: «**ք. աշխարհամատրան է:** դ. երեւման խաչի է: Եւ զկնի եղաքարտի համբարձումն է: է. պենդեկոստ է: ժ. սուրբ Գրիգորի բարեկենդան է: ժդ. Վարդավառ է»:

Երկու շաբաթ անց Աշխարհամատրան կիրակին է, 4 շաբաթ անց՝ տօն Երեւման Խաչին, դրանից յետոյ յաջորդող (մէկ շաբաթ անց եղող) հինգշաբթին՝ Համբարձում, 7 շաբաթ անց՝ Հոգեգալուստ (Պենտէկոստէ), 10 շաբաթ անց՝ սուրբ Գրիգորի Բարեկենդան եւ 14 շաբաթ անց՝ Վարդավառ: Այս ամէնը համապատասխանում է Հայաստանեաց եկեղեցու տօնացոյցի մեզ յայտնի կանոնական դրութեանը³⁹ եւ, ըստ այդմ, կարելի է համարել հարազատ բնագրային, առանց (էական) աղաւաղումների:

Բնագրի յաջորդ հատուածը վերաբերում է Աստուածածնից Ս. Յակոբի բարեկենդան եղած մի քանի տօների: «Զերեւման խաչին եւ զաստուածածինն եւ զինաչ եւ զուրք Գէորգի բարեկենդանն. եւ զՎարագա խաչն, եւ զինաչ գիւտն, եւ զիսնակամուտն, եւ զուրք Յակոբա բարեկենդանն. այսպէս արա: Գիտէ զ.է.երեակ տարյն ի բուխ գաւազանացն ի մէջն. եւ ի դիմացն զաւուրս ամսոյն եւ այն է»: **Այստեղ եւս, ամենայն հաւանականութեամբ, ունենք բնագրի էական աղաւաղում:** Նախ՝ հատուածի սկզբում նշուած է Երեւման Խաչի տօնը: Նախորդ հատուածն աւարտւում էր Վարդավառով, եւ բնական պիտի լինէր, ըստ տօնացոյցի կարգի, դրանից յետոյ ունենալ Աստուածածնի վերափոխման տօնը: Մակայն մեր շարադրանքում համապատասխան հատուածի սկզբում նշուած է Երեւման Խաչի տօնը, որ իր տօնացուցային դրութեամբ էապէս առաջ է Վարդավառից: Բացի այդ, Աստուածածնից մինչ Ս. Յակոբ այս շարադրանքում նշուած բոլոր տօները, ըստ իրենց օրացուցային դրութեան, այսպէս կոչուած՝ «Կիսաշարժական» են: Սրանք բոլորն էլ ունեն մէկշաբաթեայ շարժականութիւն որոշակի կայուն ամսաթուերի շուրջ: Այստեղ այդ տօների օրերի բացատրութիւնից («Գիտէ զ.է.երեակ տարյն ի բուխ գաւազանացն ի մէջն. եւ ի դիմացն զաւուրս ամսոյն եւ այն է») հետեւում է, որ դրանք պիտի անպայման կիրակի լինեն: Մակայն թէ ո՞րտեղ պիտի լինեն դրանց համապատասխան կի-

³⁹ ՄիՄԷՕՆ ԿԱԹՈՂԻԿՈՍ, Տօնացոյց, Էջմիածին 1774. տե՛ս նաև ՍԵՐՍ. ԴԱՐՄԱՆ, ԳԵՂԻՐԴ ԱՐՔԵՊ., Եկեղեցական սումարագիտութիւն, Մայր Արքուն Ս. Էջմիածին 2004²:

ըակիները, այդ մասին ոչինչ մեր շարադրանքում չի ասում: Ուրեմն, այստեղ եւս առկայ է հատուածի կորուստ: Բացի այդ, քաջ յայտնի է, որ Հայաստանեայց Ս. Եկեղեցու այսօրուայ տօնացոյցում սահմանափակ շարժականութիւն ունեցող այս տօները ժամանակին եղել են անշարժ, ունեցել են կայուն ամսաթուեր (Աստուածածին - Օգոստոսի 15, Խաչվերաց - Սեպտեմբերի 14, Վարագայ Ս. Խաչ - Սեպտեմբերի 28, Գիւտ Խաչին - Հոկտեմբերի 26, Յիսոնակի բարեկենդան - Նոյեմբերի 18)⁴⁰: Միայն համեմատաբար ուշ դարերում այս տօները ստացել են իրենց այսօրուայ օրացուցային դրութիւնը, որ դրանց նախնական անշարժ ամսաթուերի մերձակայ կիրակիներն են⁴¹: Բնականաբար, խառնախորանի բացատրական շարադրանքում դրանց՝ այսօրուան համապատասխանող օրացուցային դրութիւնը չէր կարող շարադրուած լինել ո՞չ Սարկաւագ վարդապետի, ո՞չ առաւել եւս Անանիա Շիրակունու ժամանակներում: Այսինքն՝ այստեղ մենք ունենք որոշակիօրէն ԺԲ. դարից ոչ չուտ արուած խմբագրման արտայատութիւն:

Բնագրիս վերջին պարբերութիւնը վերաբերում է Արեգակի եւ Լուսնի շարժման նկարագրութեանը: Այստեղ համառօտ բացատրուած են Արեգակի եւ Լուսնի շարժումը կենդանակերպերով, այդ շարժումների ընթացքը (արագութիւնը): Տրուած է նաև դրանց ո՞ր կենդանակերպի մէջ լինելը գտնելու կերպը: Բացատրուած են նաև Արեգակի եւ Լուսնի «գօտիները»: Ցատկանշական է, որ այս շարժումներին վերաբերող սիւնակներ եւս կան մեզ հասած ընդարձակ խառնախորաններում (տե՛ս, օրինակ, վերը՝ նկար 1):

Այսօր դժուար է իրարից յստակ զանազանել տարբեր ժամանակներում այս շարադրանքի մէջ արուած ներմուծումները, փոփոխութիւնները եւ այլ խմբագրումները: Լստ այդմ, այս շարադրանքի նախնական բնագիրը վերականգնելու համար հարկ է գտնել առկայ օրինակներից աւելի հին կամ աւելի քիչ աղաւաղուած բնագրեր:

40 Այդպէս է, օրինակ, Սարկաւագի անուամբ հրատարակուած «Պատճեն տումարի» երկում. տե՛ս ՅՈՎՀ. ՍԱՐԿԱՒԱԳ, 204-221 (213, 218):

41 Ցայտնի է, օրինակ, որ Աստուածածնի վերափոխման տօնի կիրակնօրեայ դրութիւնը Ս. Ներսէս Շնորհալու բարեփոխութեան արդիւնքն է. տե՛ս, օրինակ, ՕՐՄԱՆԵԱՆ, ՄԱՂ. ԱՐՔԵՊ., Շիսական բառարան, Անքիլիան 1958, 60:

ի մի բերելով արուած քննութեան արդիւնքը՝ ստանում ենք հետեւեալ պատկերը: Մեզ հասած բնագիրը՝

ա. իր բովանդակութեամբ բացատրութիւնն է Անանիայի խառնախորանի մի քանի սիւնակների, որոնց բացատրութիւնները այլուստ մեզ անյայտ են:

բ. Այդ բնագրի մէջ վերադիրները եւ եօթներեակները հաշուելու համար տրուած բանաձեւերը իրենց ձեւակերպումներով, հաշուարկի սկզբնակէտերով եւ նաեւ սխալներով այնպիսիք են, որ դրանք կարող էին առաջացած լինել հէնց Անանիայի խառնախորանի համապատասխան բանաձեւերից՝ յետագայ խմբագրումների միջոցով:

գ. Այս շարադրանքի մէջ առկայ են մի քանի ձեւակերպումներ եւ պնդումներ, որ ակնյայտ սխալ են եւ կարող են արդիւնք լինել միայն յետագայ անյաջող խմբագրումների եւ այլ հնարաւոր աղաւաղումների: Այսինքն՝ ունենք բնագիրը աղաւաղուած լինելու ակնյայտ վկայութիւններ:

Սա եւս, վերը թուարկուած հանգամանքների հետ միասին հիմք է տալիս ընդունելու, որ խնդրոյ առարկայ բնագրի նախնական օրինակը եղել է Անանիայի հեղինակածը եւ մասն է եղել նրա Տոմարի՝ իբրեւ նրա խառնախորանի բաղկացուցիչ բացարական շարադրանքի:

Summary**ABOUT A NEW COMPONENT OF THE CALENDAR OF
ANANIA SHIRAKOUNI**

GRIGOR BROUTIAN

A short text from two manuscripts of Yerevan Mashtots Matenadaran was published. The text contains the explanation of some columns of "Kharnakhoran"- the set of calendar tables giving parallel presentation of calendars of 14 nations, originally composed by Anania Shirakouni. The columns "Roman epacts", "Roman septenaries", "Week letter" (shabatagir-շաբաթագիր) are explained. Besides, instructions are given how to use these columns in order to determine the days of new Moon, full Moon, and some important feasts as "Arajawor", Quinquagesima, Easter, "Ashkharhamatran", Assumption, Pentecost, Transfiguration etc. The analyze shows that the text was seriously edited and distorted (at least twice). Some explanations (formulas) are given using calendar realities appeared after Anania. Meanwhile, the analyze of the systems of Roman epacts and septenaries shows that these systems were originally been the same as used by Anania in his Calendar. This analyze and the fact that the text explains some columns of Anania's Kharnakhoran show that the original of this text was formerly a component of Anania's Calendar (Tomar) as a part explaining some columns of Kharnakhoran.